

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

Գնաճի հաշվետվություն

Կ' 2009



**ԳԱԶԻ
հաշվետվություն**

2009 թ. 4-րդ եռամսյակ

Բովանդակություն

1. Նամառոտագիր	5
2. Գնաճի զարգացումներ	8
2.1. Գնաճն ըստ ապրանքների և ծառայությունների խմբերի, բնականոն գնաճ	8
Գնաճի տատանումների վիճակագրական վերլուծություն	9
2.2. Գնաճի նպատակի իրագործում.....	11
3. Գնաճի գործոններ	14
3.1. Արտաքին միջավայր	14
3.2. Վճարային հաշվեկշիռ	20
3.3. Տոկոսադրույթներ, փոխարժեք և դրամավարկային զարգացումներ	23
3.3.1. <i>Տոկոսադրույթներ</i>	23
3.3.2. <i>Փոխարժեք</i>	26
3.3.3. <i>Դրամավարկային զարգացումներ</i>	28
3.4. Նամախառն պահանջարկ և առաջարկ	31
3.4.1. Նամախառն պահանջարկ	31
3.4.2. Նամախառն առաջարկ	34
3.5. Աշխատանքի շուկա	36
3.6. Ներմուծման գներ և արտադրողների գներ	37
3.6.1. <i>Ներմուծման գներ</i>	37
3.6.2. <i>Արտադրողների գներ</i>	38
3.7. Գնաճի սպասումներ	39

1. ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

2009 թՎԱԿԱՆԻ
ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ
ՓԱՍՏԱՑԻ
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ
ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

2009 թվականի չորրորդ եռամսյակի հիմնական մակրոտնտեսական գարգացումները բնորոշվել են բարձր գնաճային միջավայրի ձևավորմաբ, ինչպես նաև հանաշխարհային և ներքին տնտեսության վերականգնման տեմպերի արագացմաբ: Պայմանավորված միջազգային շուկաներում հումքային և որոշ պարենային ապրանքների գների՝ սպասվածից ավելի արագ աճով, տնտեսության աշխատացմաբ, և տարվա ընթացքում իրականացված խիստ ընդլայնողական դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների պայմաններում գնաճի տեսակը չորրորդ եռամսյակում զգալիորեն աճել է՝ մինչև նոյեմբեր մշտապես պահպանվելով նպատակային թիրախի սահմաններում: Դեկտեմբերին, սակայն, 12-ամսյա գնաճի ցուցանիշը կտրուկ ավելացել է մինչև 6.5%՝ գերազանցելով նպատակային թիրախը շուրջ 1 տոկոսային կետով: Վերջինիս պատճառը դեկտեմբերին գյուղատնտեսական ապրանքների գների առավել ցայտուն սեղոնային աճն էր: Հատկանշական է, որ վերոնշյալ զարգացումների պարագայում տարեկան միջին գնաճը 2009թ-ին կազմել է ընդամենը 3.4%:

2009 թվականի չորրորդ եռամսյակում արձանագրվել է 3.7% գնաճ, որը մեծամասամբ պայմանավորվել է պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գների 5.8% աճով (նպաստումը գնաճին՝ 3.1 տոկոսային կետ), ինչն էլ, իր հերթին, հիմնականում պայմանավորվել է «Միրգ» և «Բանջարեղեն» ու կարտոֆիլ» ապրանքախմբերի գների համապատասխանաբար 35.9% (նպաստումը գնաճին՝ 0.9 տոկոսային կետ) և 44.2% (նպաստումը գնաճին՝ 2.1 տոկոսային կետ) սեղոնային աճով: Ընդ որում, «Բանջարեղեն և կարտոֆիլ» ապրանքախմբի գների աճը գերազանցապես 4 ապրանքատնտեսակների՝ լոլիկի, վարունգի, կանաչ պղպեղի և սմբուկի գների աճի հետևանք էր (նպաստումը գնաճին՝ 4.2 տոկոսային կետ): Միաժամանակ, ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների աճը կազմել է համապատասխանաբար 3.0 և 0.7%, որոնց ընդհանուր նպաստումը եռամսյակի գնաճին կազմել է ընդամենը 0.7 տոկոսային կետ: Մակրոտնտեսական գործոններով պայմանավորված գնաճային ճնշումների ազդեցությունն արտահայտվել է նաև բնականոն գնաճի վարքագծում: Հատկանշական է, սակայն, որ բնականոն գնաճը 2009թ. չորրորդ եռամսյակում կազմել է ընդամենը 1.7%¹, որի պարագայում 12-ամսյա բնականոն գնաճը նախորդ եռամսյակի նույն ցուցանիշի համեմատ ավելացել է 1.5 տոկոսային կետով՝ կազմելով 5.25%:

Համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետևանքով՝ դրսորդված տնտեսական անկումը 2009 թվականի երկրորդ եռամսյակում հասնելով իր առավելագույն մակարդակին (տ/տ 21.8%)՝ հաջորդող եռամսյակների ընթացքում դրսորել է նվազման միտումներ՝ հիմնականում պայմանավորված խթանող հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների արդյունքում մակրոտնտեսական իրավիճակի աստիճանական բարելավմանը: Արդյունքում, ինչպես և սպասվում էր, չորրորդ եռամսյակում արձանագրվել է անհամենատ փոքր՝ տ/տ 5.3% տնտեսական անկում, որի պարագայում հունվար-դեկտեմբերի տնտեսական անկման ցուցանիշը նվազել է մինչև տ/տ 14.4%: Ընդ որում, բացառությամբ շինարարության ճյուղի, որտեղ նկատվել է անկման տեմպերի նվազում, եռամսյակի ընթացքում տնտեսության մյուս ճյուղերում արձանագրվել է աճ:

Արդյունքներության ճյուղում արձանագրվել է ավելացված արժեքի շուրջ տ/տ 1.4% աճ (հունվար-դեկտեմբերին՝ տ/տ 7.6% նվազում), գյուղատնտեսության ճյուղում՝ տ/տ 2.1% աճ (հունվար-դեկտեմբերին՝ տ/տ 0.1% նվազում), իսկ ծառայությունների ճյուղում՝ տ/տ 0.7% աճ (հունվար-դեկտեմբերին ևս տ/տ 0.7% աճ):

2009 թվականի չորրորդ եռամսյակում աշխատանքի շուկայում առկա կոշտությունների պարագայում որոշակի բարձրացել են տնտեսության անվանական աշխատավարձերը՝ պայմանավորված ինչպես բյուջետային ֆինանսավորում

¹ ՀՀ ԿՐ Կողմից մշակված բնականոն գնաճի հաշվարկման մերողաբանությունը մանրամասն մերկայացված է «ՀՀ ԿՐ բանբեր» պարբերականում (2008 թ. 1-ին եռամսյակ). նոյեն պարբերականում պարբերար հրապարակվում են բնականոն գնաճի ցուցանիշները:

ունեցող, այնպես էլ մասնավոր հատվածի կազմակերպություններում աշխատավարձերի աճով: Չորրորդ եռամսյակում աշխատավարձերի աճի տեմպերը տարվա նախորդ եռամսյակում ընթացքում արձանագրված նույն ցուցանիշի համենատ դանդաղել են: Գործազրկության մակարդակը ևս տնտեսական անկման տեմպերին արձագանքել է որոշակի ժամանակային խզումով: Արդյունքում՝ չորրորդ եռամսյակում շարունակվել է դեռևս տարեսկզբից նկատվող աշխատանքի արտադրողականության նվազումը՝ նշայած վերջինիս անկման տեմպերի դանդաղմանը: Վերը նշված զարգացումները հանգեցրել են միավոր աշխատուժի ժախսերի աճի, որի հետևանքով, ըստ ՀՀ ԿԲ գնահատումների, աշխատանքի շուկայի կողմից սպառողական շուկայում շուրջ 0.9% գնաճային ծնշումներ են առաջացել:

2009 թվականի չորրորդ եռամսյակում ներքին պահանջարկի անկման տեմպերը բարելավվել են՝ հիմնականում պետական ծախսումների զգալի աճի արդյունքում: Վերջինս պայմանավորված է պետության կողմից իրականացվող հակածգնաժամային ընդլայնող քաղաքականությամբ: Մասնավոր ծախսումները ևս նպաստել են ներքին պահանջարկի անկման տեմպերի բարելավմանը:

2009 թվականի չորրորդ եռամսյակում ներքին պահանջարկի նվազումը կազմել է շուրջ 6%-՝ նախորդ եռամսյակի նույն ցուցանիշի համենատ բարելավվելով 11.6 տոկոսային կետով: Պետական ծախսերն ավելացել են շուրջ 8%-ով՝ պայմանավորված պետության իրականացրած ընդլայնողական հակածգնաժամային քաղաքականությամբ: Դանդաղել են նաև մասնավոր ծախսումների անկման տեմպերը: Վերջինիս կառուցվածքում մասնավոր ներդրումների անկումը կազմել է շուրջ 23%, իսկ մասնավոր սպառումը նվազել է 0.4 %-ով (երրորդ եռամսյակի նույն ցուցանիշների համենատ բարելավվել են համապատասխանաբար 23.8 և 1.5 տոկոսային կետով):

Զնայած կայունացման միտումներին՝ մասնավոր ծախսումները չորրորդ եռամսյակում շարունակել են ցածր մնալ բնական մակարդակից: Ըստ ՀՀ ԿԲ գնահատումների՝ մասնավոր հատվածի իրական ծախսումները 3 - 4 % ցածր են եղել բնական մակարդակից՝ սպառողական շուկայում առաջացնելով 1 - 1.2% գնանկումային ծնշումներ: Յարկ է նշել, սակայն, որ մասնավոր ծախսումների կազմում զգալի նվազել է երկարաժամկետ ապրանքների սպառումը, ինչը ՍԳԻ փոփոխության վրա էական ազդեցություն չի ունենում:

2009 թվականի չորրորդ եռամսյակում համախառն պահանջարկի վրա հարկաբյուջետային հատվածի ազդեցությունը, ըստ հարկաբյուջետային ազդակի հաշվարկված ցուցանիշի, կազմել է 7.8 տոկոսային կետ ընդլայնող՝ պայմանավորված Կառավարության հակածգնաժամային միջոցառումների իրագործման պայմաններում պետական ծախսերի և տնտեսության վարկավորման ծավալների աճով: Ընդ որում՝ ազդակը ծևավորվել է եկամուտների փոքր և ծախսերի՝ ավելի մեծ ընդլայնող ազդեցությամբ: Եկամուտների ընդլայնող ազդակի ծևավորումը պայմանավորվել է ՀՆԱ-ի նկատմանը պետական եկամուտների առաջանցիկ նվազմամբ: Չորրորդ եռամսյակում պետական բյուջեի հարկային եկամուտները, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համենատ, նվազել են 11%-ով: Նախորդ տարվա նույն եռամսյակի նկատմանը ծախսերի աճը, ներառյալ տնտեսության գուտ վարկավորումը, կազմել է 35 %, և, ըստ ազդակի հաշվարկված ցուցանիշի, համախառն պահանջարկի վրա ծախսերը ունեցել են 5.5 տոկոսային կետ ընդլայնող ազդեցություն:

Ըստ ՀՀ ԿԲ գնահատումների, չորրորդ եռամսյակում ներքին պահանջարկի և աշխատանքի շուկայի ազդեցությունը գմերի վրա 1.6 - 1.8% գնաճային է եղել:

Համաշխարհային տնտեսության վերականգնման միտումների դրսարման և ներքին տնտեսության զարգացումների պայմաններում 2009 թ. չորրորդ եռամսյակում ընթացիկ հաշվի պակասուրդը նախորդ տարվա նույն եռամսյակի համենատ նվազել է: Դա հիմնականում պայմանավորվել է եկամուտների և մասնավոր տրանսֆերտների նվազման նկատմանը առևտրային հաշվեկշռի պակասուրդի առաջանցիկ կրծատմամբ: 2009 թ. չորրորդ եռամսյակում ընթացիկ հաշվի պակասուրդը նվազել է տ/տ 102.5 մլն ԱՄՆ դոլարով և կազմել 410.2 մլն ԱՄՆ դոլար, իսկ վերջինիս կշիռը ՀՆԱ-ում՝ 15.1%: 2009 թ. արդյունքներով՝ ՀՆԱ անկման

բարձր տեմպերի պայմաններում, ընթացիկ հաշվի պակասուրդի կշիռը ՀՆԱ-ում մեծացել է և կազմել 14.0%՝ նախորդ տարվա 11.6%-ի փոխարեն:

2009 թվականի չորրորդ եռամյակում, համաշխարհային տնտեսական անկանան տեմպերի դանդաղման, դեռևս երկրորդ եռամյակից ԿԲ կողմից գնաճի նպատակային թիրախի ապահովման և տնտեսության խթանման խնդիրների համադրման շրջանակներում իրականացված ընդլայնողական դրամավարկային քաղաքականության և Կառավարության կողմից հիմնականում տարվա երկրորդ կեսից իրականացված ընդլայնողական հարկաբյուջետային քաղաքականությունների ազդեցությամբ մակրոտնտեսական կայունացման միտումները չորրորդ եռամյակում անրապնդվել են: Դա առավել ցայտուն է արտահայտվել դրամավարկային ցուցանիշների վարքագծում, որոնք այս եռամյակում ևս ածել են համեմատաբար բարձր տեմպերով: Եռամյակի ընթացքում արծանագրվել է տնտեսության դոլարայնացման աճ, ինչն արտահայտվել է թե՛ ներգրավված և թե՛ տեղաբաշխված արտարժութային միջոցների փոփոխություններում:

Չորրորդ եռամյակում պահպանվել են տնտեսության վարկավորման աշխուժացման միտումները, որի պարագայում դրսնորվել է արտարժութային վարկերի համեմատ դրամային վարկերի առաջանցիկ աճ, այդուհանդերձ վերջինիս տեմպերը դեռևս մնում են ոչ բավարար:

ԿԲ կողմից իրականացված ընդլայնողական քաղաքականության պարագայում բանկային համակարգը եռամյակի ընթացքում մշտապես տնօրինել է իրացվելիության ավելցուկի բարձր մակարդակի, ինչի ազդեցությամբ էլ նկատվել է տոկոսադրույթների նվազում ինչպես ռեալ գործառնությունների, այնպես էլ պետական արժեքերի երկրորդային շուկաներում:

Վերոնշյալ զարգացումներով էլ պայմանավորվել են գնաճի նպատակի իրագործման ընթացքը և դրամավարկային քաղաքականության ուղղությունները եռամյակի ընթացքում: Ընդհանուր առնամբ, ԿԲ-ն չորրորդ եռամյակում շարունակել է իրականացնել գների կայունության և տնտեսական ակտիվության խթանման խնդիրներից բխող դրամավարկային քաղաքականություն: Ըստ այդմ՝ կանխատեսվող հորիզոնում նախանշելով գնաճի տեմպերի ավելացման միտումներ՝ այնուամենայնիվ, տնտեսական անկման դեռևս բարձր տեմպերի առկայության պայմաններում տնտեսության արագ վերականգնմանը հնարավորինս նպաստելու անհրաժեշտությունից ելնելով, ԿԲ-ն չորրորդ եռամյակում ձեռնպահ է մնացել տոկոսադրույթների բարձրացումից: Այս քաղաքականությունը նպաստել է մակրոտնտեսական իրավիճակի բարելավմանը՝ արտահայտվելով իրական հատվածում դրական տեղաշարժերով:

2. ԳՆԱՅԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

2.1. ԳՆԱՅԻ ԸՍՏ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՄԲԵՐԻ, ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՅԻ


2009թ. դեկտեմբերին, 2008թ. դեկտեմբերի համեմատ, գրանցվել է 6.5% գնած (նախորդ տարվա նույն ցուցանիշը կազմել է 5.2%), ընդ որում՝ պարենային (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ), ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների փոփոխությունը համապատասխանաբար կազմել է 2.2%, 14.6% և 10.3% (նախորդ տարի՝ համապատասխանաբար 3.3%, 0.2% և 11.4%)՝ նպաստելով գնածի աճի մակարդակին համապատասխանաբար 1.2, 2.3 և 3.0 տոկոսային կետով:

«Պարենային ապրանքներ» ապրանքախմբի (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) 2.2% գնածը հիմնականում պայմանավորել են «Շաքարավագ» (33.9%), «Միրգ» (15.5%), «Մսամբեր» (3.3%), «Բանջարեղեն» (6.1%), «Զկնամբեր» (33.7%) ենթաապրանքները, որոնք նպաստել են գնածի ընդհանուր ցուցանիշին համապատասխանաբար 0.5, 0.4, 0.3, 0.3 և 0.2 տոկոսային կետով: Միևնույն ժամանակ, գնանկում է գրանցվել «Չու» (-12.1%) և «Հացամբեր» (-2.6%), ենթաապրանքախմբերում՝ մեղմելով գնածի ընդհանուր ցուցանիշը համապատասխանաբար - 0.2 և - 0.4 տոկոսային կետով:

«Ոչ պարենային ապրանքներ» ապրանքախմբի 14.6% գնածը հիմնականում պայմանավորել են «Անձնական օգտագործման մեքնաներ և բենզին» (23.9%), «Ղեղամիջոցներ» (29.1%), «Հագուստ և գործվածք» (11.0%), «Լվացող միջոցներ» (20.1%), «Գեղահարդարման ապրանքներ» (14.7%) և «Կոշկեղեն» (8.7%) ենթաապրանքախմբերը, որոնք գնածի վրա ունեցել են համապատասխանաբար հետևյալ նպաստումներ՝ 0.8, 0.5, 0.3, 0.3, 0.2 և 0.2:

«Ծառայություններ» ապրանքախմբի 10.3% գնածի վրա հիմնականում ազդեցություն են ունեցել «Բնակվունական ծառայություններ» (19.1%), «Տրամապորտ» (16.0%), «Բուժսպասարկման ծառայություններ» (7.2%), «Կրթության ծառայություններ» (7.5%) ենթաապրանքախմբերը, որոնք գնածին նպաստել են համապատասխանաբար 1.4, 0.7, 0.7 և 0.3 տոկոսային կետով:

**Սպառողական գմերի
իմեքսը 2009թ. չորրորդ
եռամսյակում 12-ամյա
կտրվածքով՝ ըստ
հիմնական ապրանքային
խմբերի և ծառայությունների**




2009 թ. 4-րդ եռամսյակի գնածը, նախորդ եռամսյակի վերջի նկատմամբ, կազմել է 3.7%, ինչը հիմնականում պայմանավորվել է պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գների 5.8%, ոչ պարենային ապրանքների՝ 3.0% և ծառայությունների սակագների 0.7% աճով:

2009 թ. 4-րդ եռամսյակում, նախորդ տարվա համապատասխան եռամսյակի և 2008թ. հունվար-դեկտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, գնածը կազմել է համապատասխանաբար 4.9% և 3.4%:


2009 թ. դեկտեմբերին, նախորդ տարվա դեկտեմբերի համեմատությամբ, բնականոն գնածը կազմել է 5.25%: Բնականոն գնածի ցուցանիշի վրա էական ազդեցություն են ունեցել բենզինի գնի (29.3%՝ նպաստումը բնականոն գնածին

0.9 տոկոսային կետ), օդային տրանսպորտի ուղեվարձի (47.6%՝ նպաստումը 0.8 տոկոսային կետ), ԲՈՒՀ-երի ուսման վճարի (8.1%՝ նպաստումը 0.2 տոկոսային կետ), տավարի մսի (5.3%՝ նպաստումը 0.2 տոկոսային կետ), հիվանդանոցների ծառայությունների սակագների (4.2%՝ նպաստումը 0.2 տոկոսային կետ) աճը:

**ՍԳԻ ՎԻԿԻԴԻՍՊՐԵՅՈՒՄՆԵՐԸ
Ըստ հիմնական
ապրանքային խմբերի և
ծառայությունների (2008թ.
դեկտեմբերի նկատմամբ)**



**Գնաճը և բնականոն գնաճը
2006 - 2009 թթ.
(%, նախորդ տարվա նույն
ամսվա նկատմամբ)**



Գնաճի տատանումների վիճակագրական վերլուծություն

Սպառողական գների ինդեքսի և սպառողական զանբյուղի առանձին ապրանքախմբերի գների ինդեքսների փոփոխությունների ուսումնասիրնան և դրանց տատանումները պայմանավորող գործոնների բացահայտման նպատակով 2006 թվականի հունվարից մինչև 2009 թվականի դեկտեմբերին ընկած ժամանակահատվածի համար տարանջատվել և գնահատվել է վիճակագրության տեսության մեջ ընդունված երեք բաղադրատարրերի (տրենողի, սեղոնայնության և պատահական տարրի) ազդեցությունը:

**Գների ամսական ինդեքսների տատանումները պայմանավորող բաղադրատարրերի
տեսակարար կշռները (2006 թ. հունվար - 2009թ. դեկտեմբեր) (%)**

Ամսական	Տրենող	Սեղոնայնություն	Պատահական տարր	Ընդամենը
ՍԳԻ	0.0	72.5	27.5	100.0
1. Հացամթերք	9.8	29.6	60.7	100.0
2. Սսամթերք	0.3	30.5	69.2	100.0
3. Զենամթերք	0.1	35.2	64.8	100.0
4. Կաթնամթերք և յուղեր	3.8	48.7	47.6	100.0
5. Միջոց և բանջարեղեն	0.6	93.0	6.4	100.0

6. Այլ մթերք	11.4	53.4	35.2	100.0
7. Ոչ ոգելից խմիչք	0.9	25.8	73.3	100.0
8. Ոգելից խմիչք և ծխախոտ	6.2	39.5	54.3	100.0
9. Ջաղուստ և կոշկեղեն	9.5	40.8	49.7	100.0
10. Բնակված, էլեկտրաէներգիա, վառելիք	6.1	36.2	57.7	100.0
11. Տնային գույք	12.1	26.8	61.1	100.0
12. Բուժսպասարկում և դեղորայք	0.8	37.9	61.3	100.0
13. Տռանսպորտ և կապ	2.4	45.7	52.0	100.0
14. Հանգիստ, մշակույթի ապրանքներ և ծառայություններ	4.3	81.9	13.7	100.0
15. Այլ ապրանքներ և ծառայություններ	0.1	29.7	70.2	100.0

Հաշվարկները ցույց են տալիս, որ 2005թ. հունվար - 2008թ. դեկտեմբեր ժամանակահատվածի² նկատմամբ 2006թ. հունվար - 2009թ. դեկտեմբեր ժամանակահատվածում զնածի ամփոփ ցուցանիշի վրա ավելացել է պատահական տարրի (3.3 տոկոսային կետ) ազդեցությունը, իսկ սեզոնայնության (-3.3 տոկոսային կետ) ու տրենի բաղադրատարրի (-0.1 տոկոսային կետ) ազդեցությունները նվազել են:

Ըստ ապրանքախմբերի՝ երեք բաղադրատարրերի (տրենի, սեզոնայնության և պատահական տարրի) ազդեցությունը փոփոխվել է տարրեր կերպ: 2005թ. հունվար - 2008թ. դեկտեմբեր ժամանակահատվածի նկատմամբ 2006թ. հունվար - 2009թ. դեկտեմբեր ժամանակահատվածում տրենի ազդեցությունը աճել է «Տնային գործածության ապրանքներ» (11.9 տոկոսային կետով), «Հաց և հացամթերք» (9.4 տոկոսային կետով), «Այլ մթերքներ» (9.1 տոկոսային կետով), «Հագուստ և կոշկեղեն» (4.3 տոկոսային կետով) ապրանքախմբերում և նվազել «Ոգելից խմիչք և ծխախոտ» (-23.9 տոկոսային կետով), «Այլ ապրանքներ և ծառայություններ» (-18.0 տոկոսային կետով), «Ոչ ոգելից խմիչք» (-9.2 տոկոսային կետով), «Մսամթերք» (-6.2 տոկոսային կետով) ապրանքախմբերում:

Գմերի ամսական ինդեքսների տատանման գործակիցները 2006 - 2009 թթ. (%)

Անվանում	2006	2007	2008	2009
ՍԳԻ	1.2	1.8	1.2	1.6
1. Հացամթերք	0.2	3.1	3.1	1.5
2. Մսամթերք	0.8	0.7	0.7	0.7
3. Զենամթերք	14.8	7.0	13.8	9.7
3. Կաթնամթերք և յուղեն	0.3	3.3	1.2	1.6
4. Միոց և բանջարեղեն	14.8	15.6	14.1	15.2
5. Այլ մթերքներ	0.7	1.3	0.9	1.5
6. Ոչ ոգելից խմիչք	0.3	0.8	1.8	0.1
7. Ոգելից խմիչք և ծխախոտ	0.0	0.0	0.1	0.2
8. Ջաղուստ և կոշկե	0.4	0.8	0.4	0.9
9. Բնակված, էլեկտրաէներգիա, վառելիք	0.7	0.5	2.2	5.2
10. Տնային գույք	0.3	0.3	0.5	0.8
11. Բուժսպասարկում և դեղորայք	1.6	0.7	2.0	0.8
12. Տռանսպորտ և կապ	1.7	1.0	1.2	1.8
14. Հանգիստ, մշակույթի ապրանքներ և ծառայություններ	1.0	1.3	0.7	1.7
15. Այլ ապրանքներ և ծառայություններ	0.2	0.3	1.2	0.2

² Հաշվարկների մեթոդաբանությունը նկարագրվել է «Մղացք Հայաստանի Համրապետությունում 1999 թ. 2-րդ կիսամյակ» պարբերականում:

Սեղոնայնության բաղադրատարի ազդեցությունը ավելացել է հիմնականուն «Ոգեշից խմիչք և ծխախոտ» (24.2 տոկոսային կետով), «Տրանսպորտ և կապ» (19.3 տոկոսային կետով), «Կաթնամթերք և յուղեր» (15.8 տոկոսային կետով), «Տնային գործածության ապրանքներ» (10.6 տոկոսային կետով), «Այլ ապրանքներ և ծառայություններ» (7.9 տոկոսային կետով) և նվազել «Մսամթերք» (23.2 տոկոսային կետով), «Զենամթերք» (20.6 տոկոսային կետով), «Հագուստ և կոշկեղեն» (12.5 տոկոսային կետով), «Հանգիստ, մշակույթի ապրանքներ և ծառայություններ» (9.0 տոկոսային կետով) ապրանքախմբերում: Պատահական տարրի ազդեցությունը ավելացել է «Մսամթերք» (29.4 տոկոսային կետով), «Զենամթերք» (22.4 տոկոսային կետով), «Այլ ապրանքներ և ծառայություններ» (10.0 տոկոսային կետով), «Հագուստ և կոշկեղեն» (8.2 տոկոսային կետով) ապրանքախմբերում և նվազել է «Տնային գործածության ապրանքներ» (22.5 տոկոսային կետով), «Տրանսպորտ և կապ» (21.5 տոկոսային կետով), «Կաթնամթերք և յուղեր» (15.9 տոկոսային կետով), «Այլ նթերքներ» (14.9 տոկոսային կետով), «Հաց և հացամթերք» (14.8 տոկոսային կետով) ապրանքախմբերում:

Այսուսակի ցուցանիշները վկայում են, որ ՍԳԲ տատանողականությունը 2009 թ., 2008 թ. համեմատությամբ, մեծացել է. գների տատանողականությունը աճել է «Կաթնամթերք և յուղեր», «Միրգ և բանջարեղեն», «Այլ նթերքներ», «Տնային գույք», «Տրանսպորտ և կապ», «Հանգիստ, մշակույթի ապրանքներ և ծառայություններ» ապրանքախմբերում և նվազել է «Հացամթերք», «Զենամթերք», «Ոչ ոգելից խմիչք», «Բուժսպասարկում և դեղորայք», «Այլ ապրանքներ և ծառայություններ» ապրանքախմբերում:

2.2. ԳՆԱՅԻ ՆՊԱՏԱԿԻ ԻՐԱՎՈՒՇՈՒՄ

2009 թվականին Կառավարության՝ տնտեսական ակտիվության աճին նպաստող խիստ ընդլայնողական հարկաբյուջետային քաղաքականության իրականացման պայմաններում ԿԲ դրամավարկային քաղաքականությունը նպատակատղված էր տնտեսական ակտիվության խթանման և գների կայունության ապահովման խնդիրների արդյունավետ համադրմանը: Միաժամանակ, միջազգային շուկաներում հանքահումքային ու պարենային ապրանքների գների շարունակական աճի ազդեցությամբ, հատկապես չորրորդ եռամսյակում, ներքին ապրանքային շուկաներում գնաճային ճնշումները ուժգնացել են, ինչն առավելապես դրսնորվել է դեկտեմբերին: Արդյունքում տարին ավարտվել է 12-ամսյա գնաճի 6.5% մակարդակով, ինչը գերազանցել է նպատակային միջակայքի վերին սահմանագիծը 1 տոկոսային կետով, այն դեպքում, երբ միջին տարեկան գնաճը կազմել է 3.4%:³

Նախորդող 12-ամսյա ժամանակահատվածի գնաճային միջավայրը և դրամավարկային քաղաքականության ուղղությունները բնութագրվել են հետևյալ հիմնական առանձնահատկություններով: Համաձայն դրամավարկային քաղաքականության 2009թ. առաջին եռամսյակի ծրագրի՝ չորրորդ եռամսյակի համար կանխատեսվել էր 5.9% գնաճ³, ինչը գերազանցում էր նպատակային միջակայքի (4% +/- 1.5%) վերին սահմանագիծը: ճիշտ է, 2008թ. ավարտվել էր գնաճի փաստացի 5.2% մակարդակով՝ մնալով տատանման միջակայքի սահմաններում (տե՛ս գրաֆիկ 1), այնուամենայնիվ, կանխատեսման պահին արդեն իսկ հայտնի էին մի շարք գնաճային գործոններ՝ մարտի սկզբին դրամի կտրուկ արժեգույնը, ապրիլի 1-ից կոնունալ ծառայությունների սակագների բարձրացումը և տարվա ընթացքում նախատեսվող ընդլայնողական հարկաբյուջետային քաղաքականությունը, որոնց ուղղակի և անուղղակի ազդեցությունը հաշվի առնելով էլ տարեվերջի համար ձևավորվել էր գնաճի նման բարձր կանխատեսում:

³ Տե՛ս «Դրամավարկային քաղաքականության ծրագիր, գնաճի հաշվետվություն. 2009թ. առաջին եռամսյակ» պարբերականը:


Չնայած առաջին եռամսյակի 12-ամսյա փաստացի գնաճը կազմել է ընդամենը 1%՝ պայմանավորված համաշխարհային տնտեսական ճգնաժամի խորացման և միջազգային շուկաներում ստեղծված գնաճներում միջավայրի պարագայում արդեն ներքին գների զգալի անկմանք, ինչպես նաև ֆինանսական կայունության պահպանմանն ուղղված արժութային քաղաքականության իրականացմանք, և ցածր է գտնվել նպատակային միջակայքի ստորին սահմանից 1.5 տոկոսային կետով, ԿԲ-ն հետագա եռամսյակներում ևս, հաշվի առնելով պահպանվող գնաճային միջավայրը, տարեվերջի համար կանխատեսել է գնաճի բարձր ցուցանիշներ, սակայն ավելի մեղմ սցենարով (տե՛ս գրաֆիկ 2):

Իրականում, համաշխարհային տնտեսական ճգնաժամի խորացման և ներքին պահանջարկի կտրուկ նվազման պայմաններում, վերոնշյալ գնաճային գործոնների ազդեցությունն արտահայտվել է որոշակի լազով՝ նպաստելով տարեվերջին բարձր գնաճի ծևակորմանը: Երկրորդ եռամսյակից սկսած մինչև դեկտեմբեր, պայմանավորված ներմուծված ապրանքների գների ծշգրտման շարունակմանք և կոնունալ ծառայությունների սակագների բարձրացմանք, ինչպես նաև տնտեսական ակտիվության խթանման և գների կայունության ապահովման խնդիրների արդյունավետ համադրման ուղղված ընդլայնողական դրամավարկային քաղաքականության իրականացմանք, գնաճը որոշակիորեն բարձրացել է և գտնվել նպատակային միջակայքի ստորին հատվածում: Փաստացի 12-ամսյա գնաճը երկրորդ եռամսյակում կազմել է 3.6%, երրորդում՝ 3.7% և նոյեմբերի վերջին՝ 4.6%: Եվ միայն դեկտեմբերին արձանագրված 2% գնաճի արդյունքում, ինչին մեծամասամբ նպաստել են գյուղատնտեսական մի քանի ապրանքների՝ լոլիկի, վարունգի, կանաչ պղպեղի և սմբուկի գների սեզոնային մեծ աճը (նպաստումը՝ 1.4 տոկոսային կետ), տարեվերջին գնաճը գերազանցել է միջակայքի վերին սահմանագիծը՝ կազմելով 6.5%:


Ընդհանուր առնամբ, ելնելով տնտեսական ակտիվության վերականգնման և գների կայունության ապահովման խնդիրների արդյունավետ համադրումից, ԿԲ-ն երկրորդ և երրորդ եռամսյակների ընթացքում վերաֆինանսավորման տոկոսադրույթն աստիճանաբար իջեցրել է՝ մարտի վերջի 7.75%-ից սեպտեմբերի վերջին հասցնելով 5.0%-ի: Միաժամանակ, այդ ընթացքում տոկոսադրույթի նվազեցմանը զուգահեռ, ԿԲ-ն իրականացրել է ծավալային ընդլայնման քաղաքականություն: Այն ներառել է երկարաժամկետ ռեպոների կիրառում, պետական արժեթղթերի երկրորդային շուկայում ակտիվ մասնակցություն և Կառավարության հետ համակարգված քաղաքականության շրջանակներում վարկային ծրագրերի իրականացման միջոցով մեծածավալ դրամային ռեսուլրսների ներարկում բանկային համակարգ: Չորրորդ եռամսյակում, հաշվի առնելով արտաքին և ներքին տնտեսության որոշակի աշխուժացման պայմաններում ծևակորված գնաճային ռիսկերը, ԿԲ-ն աճինուիլս է թողել վերաֆինանսավորման տոկոսադրույթը՝ 5.0%: Դրան զուգահեռ, այդուհանդերձ, ԿԲ-ն շարունակել է ծավալային ընդլայնումը, ինչը հիմնականում նպատակառությունը է տնտեսական ակտիվության խթանմանը՝ չվտանգելով գների կայունությունը:

**Գնաճի՝ 2008թ. դեկտեմբերին և 2009թ. մարտին կատարված
կանխատեսումները 2009թ. IV եռամսյակի համար**

Գրաֆիկ 1. 2008 թվականի դեկտեմբերին կանխատեսված գնաճը



Գրաֆիկ 2. 2009 թվականի մարտին կանխատեսված գնաճը



փաստացի գնաճը կանխատեսման պահին



հաշվետու եռամսյակի համար կանխատեսվող գնաճը

3. ԳՆԱՅԻ ԳՈՐԾՈՆՆԵՐ


3.1. ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐ

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո առաջին անգամ 2009թ-ին գրանցվեց համաշխարհային տնտեսության անկում՝ շուրջ -0.8%: Այնուամենայնիվ, արդեն 2009 թ. չորրորդ եռամյակում նկատելի էին համաշխարհային տնտեսության վերականգնման միտումները, ինչը հիմք հանդիսացավ միջազգային ֆինանսական կազմակերպությունների համար՝ վերանայելու համաշխարհային տնտեսական աճի իրենց կանխատեսումները: ԱՄՆ-ի նոր կանխատեսումների համաձայն՝ համաշխարհային տնտեսության վերականգնման տեմպերը 2010 թ. կկազմեն 3.9% (0.75%-ով ավելի նախորդ կանխատեսումից): Թեև եռամյակի ընթացքում կայունացման միտումներն ակնհայտ էին, այնուամենայնիվ 2009 թ. չորրորդ եռամյակի ընթացքում զարգացած արդյունաբերական երկրները շարունակել են իրականացնել ընդլայնող հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականություններ՝ ելնելով ֆինանսական կայունության վերականգնման, համախսան պահանջարկի խթանման և տնտեսական աճի շարունակականության ապահովման նպատակներից:


2009 թ. չորրորդ եռամյակում համաշխարհային ապրանքային շուկաներում շարունակվել է գների աճը՝ հիմնականում արդեն գերազանցելով նախորդ տարվա մակարդակը: Գների աճը հիմնականում պայմանավորվել է համաշխարհային տնտեսության վերականգնման նշաններով: Բացի այդ, ԱՄՆ դոլարի դիրքերի թուլացումը չորրորդ եռամյակում նույնպես նպաստել է հումքային ապրանքների՝ դոլարային արտահայտությամբ գների աճին:

Չորրորդ եռամյակում ԱՄՆ դոլարի փոխարժեքը եվրոյի նկատմամբ արժեզրկվել է մոտ 3.9 տոկոսով՝ միջինը կազմելով 1.49 ԱՄՆ դոլար՝ մեկ եվրոյի դիմաց:

**Եվրոյի նկատմամբ
ԱՄՆ դոլարի արժեզրկումը
շարունակվել է նաև չորրորդ
եռամյակում**



**Նավթամթերքների գները
չորրորդ եռամյակում կրկին
բարձրացել են**



2009 թ. չորրորդ եռամյակում գրանցվել է նավթի միջազգային գների 9.5 տոկոս աճ՝ Brent տեսակի հում նավթի բարելի համար եռ/եռ միջինը կազմելով գրեթե 75 ԱՄՆ դոլար (տ/տ աճը կազմել է 34.0 տոկոս): Եռամյակի ընթացքում նավթի գների աճը հիմնականում պայմանավորվել է համաշխարհային տնտեսության վերականգնման լավատեսական սպասումների ծնավորմամբ: Արդյունաբե-

բական մետաղների գները ևս այս եռամսյակում բարձրացել են, մասնավորապես՝ պղնձի գները նախորդ եռամսյակի համեմատ աճել են 13.5 տոկոսով՝ միջնը կազմելով 6665.6 ԱՄՆ դոլար՝ մեկ տոննայի դիմաց, իսկ տ/տ աճը կազմել է 70.5%:

Հացահատիկի գները չորրորդ եռամսյակի ընթացքում տ/տ նվազել են միջինը 10.0%-ով: Դրանք տատանվել են մեկ բուշելի դիմաց 5.4-5.7 ԱՄՆ դոլարի միջակայքում՝ եռ/եռ նվազելով 1.6 տոկոսով: 2009/2010 տարում հացահատիկի բերքը ԱՄՆ Գյուղատնտեպարտամենտի կողմից կանխատեսվել է մոտ 674 մլն տոննա՝ նախորդ տարվա 682 մլն տոննայի փոխարեն: Քանի որ բերքի ակնկալվող ծավալը 2010 թ. նույնականացնելով սպասվող սպառնան չափերը, ապա հացահատիկի համաշխարհային պաշարները ևս փոքր-ինչ կաճեն՝ մոտ 25 մլն տոննայով՝ կազմելով 190.9 մլն տոննա: Բերքի առավել մեծ չափերի ավելացումն է ակնկալվում նախկին խորհրդային երկրներից Ղազախստանում՝ 12.5 մլն տոննայից 17.0 մլն տոննա, իսկ նվազում՝ Ռուսաստանում՝ 63.7 մլն տոննայից 61.7 մլն տոննա և Ուկրաինայում՝ 26 մլն տոննայից 20.5 մլն տոննա:

Ծաքարավազի գները չորրորդ եռամսյակում շարունակել են էապես բարձրանալ՝ եռ/եռ 9.9 տոկոս՝ միջինը կազմելով 23.4 ԱՄՆ ցենտ/ֆունտի դիմաց, իսկ տ/տ հասել են 84.2 տոկոսի: Նման գնաճի հիմնական պատճառը համաշխարհային պաշարների նվազման սպառումն է:


Ստորև ներկայացվում են համաշխարհային տնտեսության մեջ մասը կազմող և ՀՀ հիմնական գործընկեր երկրների՝ ԱՄՆ-ի, Եվրոպայի և Ռուսաստանի տնտեսական զարգացումները: Այնուհետև կներկայացվեն տարածաշրջանի հարևան երկրների տնտեսական զարգացումները:

Ըստ նախնական գնահատումների՝ ԱՄՆ-ում 2009 թվականի չորրորդ եռամսյակում շարունակվել է նախորդ եռամսյակից սկսված տնտեսական վերականգնումը: Ամերիկայի Միացյալ Նահանգներում չորրորդ եռամսյակում գրանցվել է եռ/եռ տարեկանացված 5.7% տնտեսական աճ՝ նախորդ եռամսյակի 2.2% աճի փոխարեն: Տնտեսական աճին հիմնականում նպաստել է սպառողական ծախսերի (1.4 տոկոսային կետով նպաստում), մասնավոր ներդրումների (3.8 տոկոսային կետով) և արտահանման ծավալների ավելացումը (1.9 տոկոսային կետով):

Զուտ արտահանման պակասուրդը ՀՆԱ-ում 2009 թ. չորրորդ եռամսյակում կրճատվել է՝ կազմելով 3.0% (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում՝ 4.1%), որին նպաստել է ներմուծման՝ արտահանման նկատմամբ առաջանցիկ կրճատումը և քանակական, և արժեքային արտահայտությամբ:

2009 թվականի չորրորդ եռամսյակում ԱՄՆ-ում արծանագրվել է տ/տ 1.5 տոկոս գնաճ (նախորդ եռամսյակում՝ -1.5 տոկոս գնաճնում): Սա հիմնականում պայմանավորվել է ապրանքային և վառելիքի շուկայում գների արագ աճով: 2009 թվականի չորրորդ եռամսյակում թեև նկատելի էն տնտեսությունների կայունացման միտումներ, այնուամենայնիվ Ֆեդերալ պահուստային համակարգը շարունակել է խթանող դրամավարկային քաղաքականությունը՝ պահպանելով ֆեդերալ ֆոնդերի նպատակային տոկոսադրույքների 0 - 0.25% նպատակային միջակայքը և ծավալային ընդլայնման միջոցառումները:


ԱՄՆ-ում 2009թ. չորրորդ եռամսյակում գրանցվեց գնաճ



Համաձայն Եվրոստատի նախնական գնահատումների՝ Եվրոգոտում 2009թ. չորրորդ եռամյակում, նախորդ եռամյակի համեմատ, գրանցվել է 0.1 տոկոս տնտեսական աճ, իսկ տ/տ գրանցվել է 2.1 տոկոս անկում (նախորդ եռամյակում՝ համապատասխանաբար 0.4% և -4.0%):

Սպառողական գների ինդեքսը 2009 թ. չորրորդ եռամյակում աճել է տ/տ 0.4 տոկոսով՝ նախորդ եռամյակի 0.4 տոկոս գնանկման փոխարեն: Եվրոպական կենտրոնական բանկը եռամյակի ընթացքում տոկոսադրույթները պահպանել է նույն 1.0% մակարդակի վրա՝ զուգահեռ պահպանելով ծավալային ընդլայնման քաղաքականությունը:

Եվրոգոտում գրանցվել է գների աճ



Ոլուսաստանի տնտեսության՝ նախորդ եռամյակի վերջերից դրսևորվող վերականգնման միտումները շարունակվել են չորրորդ եռամյակում. նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ՀՆԱ նվազումը կազմել է 2.9%: Վերջինիս նպաստել են նավթի գների բարձր մակարդակի պահպանումը և համաշխարհային պահանջարկի աստիճանական վերականգնումը: Տարվա արդյունքներով, ըստ նախնական գնահատումների, ՀՆԱ անկումը կազմել է 7.9%:

Արդյունաբերության նվազումը 2009 թ. չորրորդ եռամյակում կազմել է տ/տ 2.6%, որի պարագայում տարվա կտրվածքով նվազումը կազմել է 10.8%: Ոչ արտահանելի ճյուղերում՝ առևտություն և շինարարության, չորրորդ եռամյակում գրանցվել է համապատասխանաբար տ/տ 6.1% և 9.8% նվազում: Իսկ ըստ 2009թ. արդյունքների՝ շինարարության ճյուղում նվազումը կազմել է 17%, իսկ առևտությունում՝ 5.5%:

Նշված զարգացումները և համաշխարհային տնտեսության նոր կամխատեսումները հաշվի առնելով՝ ԱՄՆ վերանայել է Ոլուսաստանի տնտեսական աճի 2010 թ. ցուցանիշը ավելացնան ուղղությամբ և գնահատել 3.6%: Այնուամենայնիվ, ներքին բույլ պահանջարկի և տնտեսության կառուցվածքային սահմանափակումների ռիսկերը դեռևս պահպանվում են:

2009 թ. չորրորդ եռամյակում համաշխարհային տնտեսության բարենպաստ միջավայրի ներքո շարունակվել է ընթացիկ հաշվի բարելավման միտումը՝ կապիտալի և ֆինանսական միջոցների զուտ ներհոսքի պայմաններում: Ընթացիկ հաշվի հավելուրդը կազմել է 15.6 մլրդ ԱՄՆ դոլար, ինչը 7.1 մլրդ ԱՄՆ դոլարով բարձր է նախորդ տարվա չորրորդ եռամյակում արձանագրված ընթացիկ հաշվի հավելուրդից: Կապիտալի և ֆինանսական հաշվով գրանցվել է 9.0 մլրդ ԱՄՆ դոլարի զուտ ներհոսք՝ նախորդ եռամյակի 25.4 մլրդ ԱՄՆ դոլար զուտ արտահոսքի փոխարեն: Վերջինս հիմնականում պայմանավորվել է բանկային համակարգի կողմից միջոցների զուտ ներհոսքով: Վճարային հաշվեկշռի նշված հոսքերի առկայությամբ Ոլուսաստանի կենտրոնական բանկի պահուստները չորրորդ եռամյակում ավելացել են 28.8 մլրդ ԱՄՆ դոլարով և 2010թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել 439 մլրդ ԱՄՆ դոլար:

Վճարային հաշվեկշռի հավելուրդի պայմաններում ԱՄՆ դոլարի նկատմամբ ռուբլու անվանական միջին փոխարժեքը չորրորդ եռամյակի ընթացքում շարունակել է արժենորվել: Արդյունքում՝ ռուբլու միջին անվանական փոխարժեքը չորրորդ եռամյակում ԱՄՆ դոլարի նկատմամբ արժենորվել է 5.9%-ով՝ նախորդ եռամյակի միջինի նկատմամբ, իսկ տ/տ արժեգրկումը կազմել է 8.1%: Չորրորդ

Եռամսյակում Ռուսաստանի կենտրոնական բանկը արտարժույթի շուկայում հանդէս է եկել որպես զուտ գնորդ՝ ռուբլու փոխարժեքի առավել արժևորումը զայելու նպատակով:

Գնաճի նվազման միտումը չորրորդ եռամսյակի ընթացքում շարունակվել է. արձանագրվել է տ/տ 9.3% գնաճ (նախորդ եռամսյակում՝ 11.5%): Թեև գնաճի տեմպերը թուլանում են, այնուամենայնիվ դրամավարկային և հարկաբյուջեային ընդլայնողական քաղաքականությունների գնաճային հետևանքներն առավել վառ կղուսնորվեն 2010թ. առաջին կիսամյակի ընթացքում:

2009թ. չորրորդ եռամսյակում Ռուսաստանի կենտրոնական բանկը շարունակել է տոկոսադրույթների նվազեցման քաղաքականությունը՝ երեք անգամ նվազեցնելով տոկոսադրույթները: Վերջիններս սեպտեմբերին սահմանված 10%-ից նվազեցվել են և դեկտեմբերին կազմել 8.75%: Նշված որոշումը նպատակատրված է վարկային ռեսուլուսների հասանելիության բարձրացմանը և պահանջարկի խթանմանը: Տոկոսադրույթների նվազեցման քաղաքականությունը պայմանավորված է գնաճի դիմամիկայի բարենպաստ միտումներով և գնաճային սպասումների աստիճանական թուլացմանք:

Մակրոտնտեսական իրավիճակը հարևան երկրներում⁴

Թուրքիա. Նախորդ երեք եռամսյակների 9.7% (միջինը) տնտեսական անկումից հետո թուրքիայի տնտեսությունում արձանագրվել է հերթական նվազում՝ 2009թ. երրորդ եռամսյակում տ/տ 3.3%⁵: Վերջինն նախորդ եռամսյակի 7.9% նվազման համեմատ բարելավում է, սակայն սեզոնային գործոնը բացառելու դեպքում, այնուամենայնիվ, նախորդ եռամսյակի համենատ դեռևս 1.7% բացասական աճ է արձանագրվել: Դունկար-սեպտեմբերին տնտեսական անկումը կազմել է 8.4%: Պահանջարկի տեսանկյունից, եռամսյակի տնտեսական նվազման վրա ամենամեծ բացասական ազդեցությունն ունեցել են ներդրումները՝ 3.8 տոկոսային կետ նպաստումով: Մասնավոր սպառման նվազումը երրորդ եռամսյակում կազմել է տ/տ 0.9%: Ընդհանուր առնամբ, ներքին պահանջարկը (առանց պաշարների) ունեցել է 4 տոկոսային կետ բացասական ազդեցություն, մինչդեռ զուտ արտաքին պահանջարկը՝ 2 տոկոսային կետ դրական նպաստում:

Անկման ամենաբարձր տեմպերն արձանագրվել են վերամշակող արդյունաբերության, շինարարության և մեծածախ ու մանրածախ առևտորի ծյուղերում, որտեղ հունվար-սեպտեմբերին նվազման տեմպերը կազմել են համապատասխանարար 12.4%, 19.5% և 16.3%:

Տերքին և արտաքին պահանջարկի նվազման պայմաններում հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին ընթացիկ հաշվի պակասուրդը կազմել է 991 մլն ԱՍՆ դոլար՝ կապիտալի 220 մլն ԱՍՆ դոլար զուտ արտահոսքի պարագայում: Կրյունքում՝ 2009թ. հունվար-նոյեմբերին ընթացիկ հաշվի պակասուրդը կազմել է 9.9 մլրդ ԱՍՆ դոլար՝ նվազելով 28.9 մլրդ ԱՍՆ դոլարով կամ 74.4%-ով, ինչը հիմնականում պայմանավորվել է առևտորային հաշվեկշռի պակասուրդի զգալի նվազմամբ, իսկ կապիտալի և ֆինանսական հաշվով միջոցների զուտ ներհոսքը նշված ժամանակահատվածում կազմել է 2.4 մլրդ ԱՍՆ դոլար՝ նախորդ տարվա նկատմամբ նվազելով 93.2%-ով:

Օստարեկրյա ուղղակի ներդրումների զուտ ներհոսքը հունվար-նոյեմբերին կազմել է 5.8 մլրդ ԱՍՆ դոլար՝ նվազելով 60%-ով: Պորտֆելային ներդրումների գծով արձանագրվել է 851 մլն ԱՍՆ դոլարի զուտ ներհոսք՝ նախորդ տարվա հունվար-նոյեմբերի 5.2 մլրդ ԱՍՆ դոլարի զուտ արտահոսքի փոխարեն: «Այլ ներդրումներ» հովածով գրանցվել է 4.2 մլրդ ԱՍՆ դոլարի զուտ արտահոսք, ինչը հիմնականում պայմանավոր-

⁴ Հարևան երկրների տնտեսությունների ուսումնասիրումը կարևորվում է այն առումով, որ, ենթարկվելով նոյնաննան ցնցումների, կարող են ամուլղակի ազդել ՝ այսպատճի տնտեսության վրա: 1990-ական թվականների ճգնաժամերը ցույց տվեցին, որ ազնեցության անուղղակի ուղիները՝ արտահանման միևնույն շուկամերը, վարկանորոդ միևնույն կազմակերպությունները կամ երկրները, միևնույն ներդրողները և այլն, ավելի ու ավելի մեծ դերակատարում են ունենում տարածաշրջանային տեսանկյունից երկրների տնտեսությունների զարգացումների վրա: Հետևաբար երկրները մշտապես ուշադրություն են դարձնում ոչ միայն գործընթեր, այլ նաև տարածաշրջանային հարևան երկրների մակրոտնտեսական զարգացումներին: Ավելացնենք նաև, որ հրանք ներառված չէ այն պատճառով, որ վերջինիս թվային տվյալները թերի են, ինչպես նաև ստացվում են բավականին ուշ, երբ կորցնում են հրատապությունը:

⁵ 2009թ. չորրորդ եռամսյակի տնտեսական աճի պաշտոնական ցուցանիշները բացակայում են:

վել է այլ մասնավոր հատվածի (առանց բանկերի) կողմից միջոցների գուտ արտահոսքով:

Նշված հոսքերի արդյունքում վճարային հաշվեկշիռը հունվար-մայիսբերին համարել է Կենտրոնական բանկի պաշտոնական պահուստների 481 մլն ԱՄՆ դոլարով նվազման («Մխալեր և բացթողումներ» հոդվածով արձանագրվել է բավականին մեծ՝ 6.9 մլրդ ԱՄՆ դոլարի գուտ ներհոսք):

Չորրորդ եռամյակի ընթացքում բուրքական լիրան ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկվել է, որի պարագայում նախորդ եռամյակի 4.6% արժևորման համեմատ ընթացիկ եռամյակում միջին անվանական փոխարժեքի արժևորումը կազմել է ընդամենը 0.8%, իսկ նախորդ տարվա չորրորդ եռամյակի նկատմամբ միջին արժևորումը՝ 3.7%:

Դամաշխարհային և ներքին տնտեսության զարգացումներով պայմանավորված սպառողական գների աճի տեմպերը չորրորդ եռամյակի ընթացքում ավելացել են և կազմել տու 5.7%՝ նախորդ եռամյակի 5.3%-ի փոխարեն: Դրա հիմնական պատճառը դեկտեմբերին չմշակված պարենային ապրանքների գների աճն էր և բազայի էֆեկտը: Գների նշված աճը ոչ թե ընդհանուր գների ծևազորման միտում է, այլ ժամանակավոր գործոնների ազդեցության հետևանք: Ինչ վերաբերում է բնականոն գնածին, ապա վերջինս միջինժամկետ թիրախի սահմաններում է:

Դաշվի առնելով 2009թ. չորրորդ եռամյակի ընթացքում վարկային շուկաներում դրսորվող բարենպաստ զարգացումները և տնտեսական ակտիվության աստիճանական վերականգնումը՝ թուրքայի կենտրոնական բանկը դանդաղեցրել է տոկոսադրույթների նվազեցման չափերը և նոյեմբերին վերաֆինանսավորման տոկոսադրույթը սահմանվել է 6.5%՝ սեպտեմբերի 7.25%-ի փոխարեն:

Աղրբեջանի տնտեսությունը. ի հաշիվ վառելիքի (նավթ, բնական գազ և այլ ածխաջրեր) արդյունահանման, 2009թ. ևս պահպանել է իրական ՀՆԱ աճի տեմպերը, որը կազմել է 9.3%, ընդ որում՝ ոչ նավթային հատվածում՝ 3.2%⁶: Նավթային հատվածում աճը կազմել է 14.9%: Սակայն նկատենք, որ ՀՆԱ դեֆյատորի 21.2% նվազման արդյունքում անվանական ՀՆԱ-ն նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ նվազել է 13.85%-ով: ՀՆԱ աճի 50.0%-ը բաժին է ընկել արդյունաբերությանը, 6.7%-ը՝ գյուղատնտեսությանը, 7.4%-ը՝ շինարարությանը, 8.6%-ը՝ տրանսպորտին և հեռահաղորդակցությանը, 7.0%-ը՝ մեծածախ և մանրածախ առևտուրի ոլորտին, 11.7%-ը՝ սոցիալական ծառայությունների ոլորտին, 8.6%-ը՝ արտադրանքի և ներմուծման գուտ հարկերին⁷:

2009 թ. երկրորդ կեսից Աղրբեջանի տնտեսությունը գունվել է ցածր գնածի գոտում, և տարեկան միջին գնածը կազմել է 1.5%: Գնածի ցածր մակարդակը պայմանավորվել է պարենային ապրանքների գնանկումով՝ 1.5%, մինչդեռ ոչ պարենային ապրանքների և ծառայությունների գների աճը կազմել է համապատասխանարար՝ 3.4% և 7.1%⁸: Նշված ժամանակահատվածում բնակչության եկամուտներն ավելացել են 8.0%-ով, իսկ միջին ամսական աշխատավարձը՝ 8.6%-ով և կազմել 370.7 ԱՄՆ դոլար (298.0 մանաթ)⁹:

2009 թ. ընթացքում Աղրբեջանի առևտուրային հաշվեկշիռը թեև երել է հավելուրդով՝ 8.6 մլրդ ԱՄՆ դոլար, սակայն նախորդ տարվա նույն ժամանակաշրջանում գունդված հավելուրդի համեմատ նվազել է շուրջ 4.7 անգամ, որը պայմանավորված է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ արտաքին առևտուրի շուրջ 2.6 անգամ կրճատմամբ: Ընդ որում՝ արտահանումը կրճատվել է շուրջ 3.3 անգամ¹⁰: Աղրբեջանի 2009թ. արտահանման արժեքի 81.6%-ը կազմել է հում նավթը, որի արտահանման ծավալը 2008թ. համեմատ կրճատվել է 72.9%-ով¹¹:

2009 թ. հունվար-սեպտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, զգալիորեն՝ շուրջ 40.5%-ով նվազել է նաև ուղղակի ներդրումների համախառն ներհոսքը: Օստարելքրայ ուղղակի ներդրումների ներհոսքը կազմել է 2.0 մլրդ ԱՄՆ դոլար, որում առաջատար են Մեծ Բրիտանիան (49.2%), ԱՄՆ-ը (14.7%), ճապոնիան (7.7%), նորվեգիան (4.8%), Թուրքիան (3.8%), Ֆրանսիան (2.7%), Չեխիան (2.3%), Շվեյցարիան (2.1%) և Կորեան (0.8%)¹²:

⁶ Աղրյուրը՝ Աղրբեջանի կենտրոնական բանկի վիճակագրական բյուլետեն, 2009 թ. հունվար-դեկտեմբեր, աղյուսակ 1.1:

⁷ Աղրյուրը՝ <http://abc.az/rus/news/41900.html>:

⁸ Աղրյուրը՝ Աղրբեջանի վիճակագրության կոմիտեն. http://www.azstat.org/sdds/en/P_I/I_C_P.shtml:

⁹ Աղրյուրը՝ Աղրբեջանի կենտրոնական բանկի վիճակագրական բյուլետեն, 2009 թ. հունվար-դեկտեմբեր, աղյուսակ 1.1:

¹⁰ Աղրյուրը՝ <http://abc.az/rus/news/42232.html>:

¹¹ Աղրյուրը՝ <http://abc.az/rus/news/42261.html>:

¹² Աղրյուրը՝ Աղրբեջանի կենտրոնական բանկի վիճակագրական բյուլետեն, 2009 թ. հունվար-դեկտեմբեր, աղյուսակ 1.4, <http://abc.az/rus/news/41947.html>:

Ինչպես և նախորդ տարի, 2009թ.-ին ևս Աղբեջանի կենտրոնական բանկը վարել է մանաթի փոխարժեքի կայունության կամ, առնվազն, արժեգրկման գսաման քաղաքականություն: Արդյունքում՝ 2009 թ. հունվար-դեկտեմբերին մանաթի փոխարժեքը ԱՄՆ դոլարի մկանամբ արժեգրկվել է ընդամենը 0.26%-ով, իսկ միջին տարեկան փոխարժեքը տևականությամբ է 2.32%-ով¹³: Որոշ տնտեսագետ-վերլուծաբանների կարծիքով, մանաթի փոխարժեքի կայունության պահպանման նպատակով ծախսվել է 1.5 մլրդ դոլար¹⁴:

2008 թ. դեկտեմբերի վերջի համեմատ տնտեսության վարկավորման ծավալները ավելացել են 17.4%-ով, սակայն, դրա հետ մեկտեղ, շուրջ 2 անգամ ավելացել են անհուսալի վարկերի ծավալները¹⁵: Բանկային ավանդների ծավալները կրճատվել են տևականությունում՝ արժեգրկվել են ինչպես ազգային արժույթով, այնպես էլ արտարժույթով պահպանների ծավալները: Արտարժույթով պահպանների տեսակարար կշիռը ընդհանուր պահպաններում 2009 թ. դեկտեմբերի վերջի դրությամբ կազմել է 53.4%¹⁶:

Բանկային համակարգի ֆինանսական կայունության աջակցելու և տնտեսական ակտիվությունը պահպանելու նպատակով Աղբեջանի կենտրոնական բանկը 2009 թ. առաջին կիսամյակում վարել է ընդամողական դրամավարկային քաղաքականություն: Սամավորապես, վետրվարի 2-ին վերաֆինանսավորման տոկոսադրույթը իջեցրել է 3%-ով, մարտի 2-ին՝ 2%-ով և մայիսի 25-ին՝ ևս 1%-ով՝ սահմանելով 2%¹⁷: Դրա հետ մեկտեղ, 2.5%-ով կրճատվել է ազգային արժույթով և արտարժույթով պարտադիր պահուստավորման նորմատիվը և սահմանվել 0.5%¹⁸: Սակայն 2009 թ. մանաթի զանգվածի աճը կազմել է ընդամենը 1.45%, նախորդ տարվա 38.5% աճի փոխարեն¹⁹:

Աղբեջանի կենտրոնական բանկի արտարժությային պահուստները 2009թ. ընթացքում (վերջին երեք տարիների ընթացքում առաջին անգամ) նվազել են 16.9%-ով և 2009 թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ կազմել շուրջ 5.2 մլրդ ԱՄՆ դոլար²⁰:

Վրաստանի տնտեսությունը, սկսած 2008 թ. երկրորդ կիսամյակից, տնտեսական ամկման փուլում է: 2009 թ. հունվար-սեպտեմբերին տնտեսական ամկումը կազմել է 5.5%²¹: Այդ ընթացքում ՀՆԱ կառուցվածքում առավել մեծ տեսակարար կշիռ են ունեցել պետական կառավարման ոլորտը՝ 13.1%, արդյունաբերությունը՝ 13.0%, առևտուրի ոլորտը՝ 12.1%, գյուղատնտեսությունը՝ 8.5% և տրանսպորտի ոլորտը՝ 6.9%²²:

2009 թ. առաջին հնր ամիսների ընթացքում Վրաստանում գնածը տևականությամբ կազմել է 1.7%, իսկ նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ գրանցվել է 3.0% գնած: Ընդ որում, նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ բոլոր ապրանքային խմբերում գրանցվել է գնամկում, մինչդեռ կարճաժամկետ սպառման ապրանքների և ժառայությունների գծով՝ 3.2% և ծառայությունների գծով՝ 5.5% գնած²³: 2010-2012թթ. համար Վրաստանի ազգային բանկը նպատակադրել է 6% գնածի մակարդակ:

2009թ. ընթացքում իրականացված ապրանքների արտահանման-ներմուծման գործարքների արդյունքում Վրաստանի առևտորային հաշվեկշռի բացասական մնացորդը բարելավվել է և կազմել է 3.2 մլրդ ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա 4.8 մլրդ դոլարի փոխարեն: Առևտորային հաշվեկշռի բացասական մնացորդի բարելավումը պայմանավորվել է նախորդ տարվա համեմատ ներմուծման (ՄիՖ) ծավալների՝ 30.6%-ով, իսկ արտահանման (ՖՕԲ) ծավալների՝ 24.1%-ով նվազմամբ²⁴:

Զգալիորեն նվազել է ինչպես օտարերկրյա ուղղակի ներդրումների, այնպես էլ պորտֆելային ներդրումների համախառն ներհուսքը: 2009 թ. հունվար-սեպտեմբերին

¹³ Աղբյուրը՝ Աղբեջանի կենտրոնական բանկի վիճակագրական բյուլետեն, 2009 թ. հունվար-դեկտեմբեր, աղյուսակ 1.1:

¹⁴ Աղբյուրը՝ <http://abc.az/rus/news/41988.html>:

¹⁵ Աղբյուրը՝ Աղբեջանի կենտրոնական բանկի վիճակագրական բյուլետեն, 2009 թ. հունվար-դեկտեմբեր, աղյուսակ 2.8:

¹⁶ Աղբյուրը՝ Աղբեջանի կենտրոնական բանկի վիճակագրական բյուլետեն, 2009 թ. հունվար-դեկտեմբեր, աղյուսակ 2.3:

¹⁷ Աղբյուրը՝ <http://www.nba.az/default.aspx?go=699>:

¹⁸ Աղբյուրը՝ Աղբեջանի կենտրոնական բանկի վիճակագրական բյուլետեն, 2009 թ. հունվար-սեպտեմբեր, աղյուսակ 2.12:

¹⁹ Աղբյուրը՝ Աղբեջանի կենտրոնական բանկի վիճակագրական բյուլետեն, 2009 թ. հունվար-սեպտեմբեր, աղյուսակ 2.4:

²⁰ Աղբյուրը՝ http://www.cbar.az/infoblocks/money_reserve_usd:

²¹ Աղբյուրը՝ Վրաստանի ազգային բանկի Դրամավարկային և բանկային վիճակագրության բյուլետեն, 2009 թ. հունվար-դեկտեմբեր, աղյուսակ 1.1: 2009թ. ՀՆԱ-ի և մրա տարրերի դինամիկային վերաբերող ցուցանիշները կիրապարակվեն 2010թ. մարտի 30-ին:

²² Աղբյուրը՝ http://www.statistics.ge/_files/english/nad/GDP%20at%20current%20prices.xls:

²³ Աղբյուրը՝ Վրաստանի ազգային բանկի Դրամավարկային և բանկային վիճակագրության բյուլետեն, 2009 թ. հունվար-դեկտեմբեր, աղյուսակ 1.1:

²⁴ Աղբյուրը՝ նոյեն տեղում, աղյուսակ 5.4:

օտարերկրյա ուղղակի ներդրումների ներհոսքը վրաստան կազմել է 509.8 մլն ԱՄՆ դոլար, որը տ/տ նվազել է ավելի քան 2.5 անգամ, իսկ պորտֆելային ներդրումների համախառն ներհոսքը՝ ընդամենը 15.6 մլն ԱՄՆ դոլար, որը տ/տ նվազել է շուրջ 40 անգամ²⁵: 2008թ. համեմատ շուրջ 16%-ով նվազել է նաև արտերկրից դրամական փոխանցումների ներհոսքը: 2009թ. այդ ցուցանիշը կազմել է 841.6 մլն ԱՄՆ դոլար²⁶:

Կրտարժութային ներհոսքի կրծատման պայմաններում 2009 թ. ընթացքում ԱՄՆ դոլարի նկատմամբ վրացական լարիի միջին փոխարժեքը տ/տ արժեզրկվել է 10.8%-ով, իսկ 2008թ. դեկտեմբերի վերջի համեմատ լարին արժեզրկվել է 1.1%-ով²⁷: Ընդ որում, Վրաստանի ազգային բանկի միջանությունը ներքին արժութային շուկայում՝ արտադրության գույն վաճառքի ձևով, 2009թ. ընթացքում կազմել է 189 մլն ԱՄՆ դոլար, այն դեպքում, եթե միայն 2008թ. հոկտեմբեր -դեկտեմբերին Վրաստանի ազգային բանկի կողմից արտադրության գույն վաճառքը կազմել էր 557.5 մլն ԱՄՆ դոլար²⁸:

Միջազգային ֆինանսական ճգնաժամի պայմաններում բանկային համակարգի ֆինանսական կայունության աջակցելու նպատակով Վրաստանի ազգային բանկը 2009 թ. իրականացրել է ընդլայնողական դրամավարկային քաղաքականություն և չորս անգամ՝ փետրվարի 18-ին՝ 1%-ով, մարտի 18-ին՝ 0.5%-ով, ապրիլի 15-ին՝ 0.5%-ով և մոյեմբերի 25-ին՝ 1%-ով իջեցրել է վերաֆինանսավորման տոկոսադրությունը՝ հասցնելով 5.0%-ի²⁹: Այս պայմաններում, լարիի գանգվածի 2009 թ. աճը կազմել է 14.9%՝ նախորդ տարվա 13.3% նվազման փոխարեն³⁰:

Բանկերի կողմից տնտեսության վարկավորման ծավալները նվազել են. ազգային արժույթով տրամադրված վարկերի ծավալները կրծատվել են 26.5%-ով, իսկ արտադրութայինը՝ 8.3%-ով³¹: Բանկերի կողմից ներգրավված ավանդների ծավալն ավելացել է, ընդ որում՝ ազգային արժույթով ավանդների աճը կազմել է 16.8%: Թեև 2009թ. ընթացքում արտադրութային ավանդների ծավալներն ավելացել են 6.4%, այնուամենայնիվ տնտեսության դրամավագան մակարդակը մնում է բարձր: Այսպես, 2009 թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ արտադրութային ավանդները կազմել են ընդհանուր ավանդների 73.4-ը³²:

Վրաստանի ազգային բանկի արտադրութային պահուստները 2009 թ. ընթացքում ավելացել են շուրջ 42.6%-ով և դեկտեմբերի 30-ի դրությամբ կազմել 2.1 մլրդ ԱՄՆ դոլար³³: Այդ նույն ժամանակահատվածում շուրջ 26.0% -ով աճել է նաև Վրաստանի արտաքին պարտքը և դեկտեմբերի 30-ի դրությամբ կազմել 3.4 մլրդ ԱՄՆ դոլար³⁴: Կրտաքին պարտքի աճը պայմանավորված է միջազգային ֆինանսական կազմակերպություններից ներգրավված վարկերով և Լոնդոնի բորսայում 500 մլն ԱՄՆ դոլարի պետական պարտատոմների վաճառքով³⁵:

3.2. ՎճԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՆԵՐԻ³⁶

3.2.1. Ընթացիկ հաշիվ

Համաշխարհային տնտեսության վերականգնման միտումների և ներքին տնտեսության զարգացումների պայմաններում 2009թ. չորրորդ եռամսյակում ընթացիկ հաշվի պակասուրդը նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ նվազել է: Վերջինս հիմնականուն պայմանավորվել է առևտրային հաշվեկշռի պակասուրդի առաջանցիկ կրծատմամբ եկամուտների և մասնավոր տրանսֆերների նվազման նկատմամբ: 2009թ. չորրորդ եռամսյակում ընթացիկ հաշվի պակասուրդը նվազել է տ/տ 102.5 մլն ԱՄՆ դոլարով և կազմել 410.2 մլն ԱՄՆ դոլար, իսկ վերջինիս կշիռը ՀՆԱ-ում՝ 15.1%:

²⁵ Աղբյուրը՝ նույն տեղում, այդուսակ 5.3:

²⁶ Աղբյուրը՝ նույն տեղում, այդուսակ 5.8:

²⁷ Աղբյուրը՝ նույն տեղում, այդուսակ 1.1 և 4.7:

²⁸ Աղբյուրը՝ նույն տեղում, այդուսակ 4.5:

²⁹ Աղբյուրը՝ Վրաստանի ազգային բանկի հունվար-սեպտեմբերի մամլո հաղորդագրություններ, www.pbg.gov.ge:

³⁰ Աղբյուրը՝ Աղբյուրների կենտրոնական բանկի վիճակագրական բյուլետեն, 2009 թ. հունվար-սեպտեմբեր, այդուսակ 2.3 և 2.4:

³¹ Աղբյուրը՝ Վրաստանի ազգային բանկի Դրամավարկային և բանկային վիճակագրության բյուլետեն, 2009 թ. հունվար-սեպտեմբեր, այդուսակ 3.5:

³² Աղբյուրը՝ Վրաստանի ազգային բանկի Դրամավարկային և բանկային վիճակագրության բյուլետեն, 2009 թ. հունվար-սեպտեմբեր, այդուսակ 3.15:

³³ Աղբյուրը՝ Վրաստանի ազգային բանկի Դրամավարկային և բանկային վիճակագրության բյուլետեն, 2009 թ. հունվար-դեկտեմբեր, այդուսակ 5.1:

³⁴ Աղբյուրը՝ Վրաստանի ազգային բանկի Դրամավարկային և բանկային վիճակագրության բյուլետեն, 2009 թ. հունվար-դեկտեմբեր, այդուսակ 5.2:

³⁵ Աղբյուրը՝ *Georgian Business Consulting*, 9 հոկտեմբերի, 2009թ., www.gbc.ge:

³⁶ 2009թ. չորրորդ եռամսյակի ցուցանիշները 77 ԿԲ կամխատեսումներն են:

2009 թ. արդյունքներով՝ ՀՆԱ անկման բարձր տեմպերի պայմաններում, ընթացիկ հաշվի պակասուրդի կշիռը ՀՆԱ-ում մեծացել է և կազմել 14.0%՝ նախորդ տարվա 11.6%-ի փոխարեն:

2009 թ. չորրորդ եռամսյակում առևտրային հաշվեկշռի պակասուրդը նվազել է 185 մլն ԱՄՆ դոլարով և կազմել 676.4 մլն ԱՄՆ դոլար: Արտահանման և ներմուծման նվազումը չորրորդ եռամսյակում կազմել է համապատասխանաբար տ/տ 10.5% և 19.0%: Առևտրային հաշվեկշռի պակասուրդի նվազումը պայմանավորվել է արտահանման նկատմամբ ներմուծման առաջանցիկ նվազմանք: Ըստ 2009թ. արդյունքների՝ արտահանման և ներմուծման նվազումը կազմել է համապատասխանաբար 34.4% և 25.6%:

Արտահանման դոլարային արժեքի նվազման տեմպերի դանդաղման պատճառը չորրորդ եռամսյակում մետաղների գների տ/տ աճն էր, ինչպես նաև նախորդ տարվա նույն եռամսյակում արտահանման ցածր մակարդը: Ապրանքների արտահանման իրական ծավալների նվազման բարձր տեմպերը դեռևս պահպանվում են: Արտահանման դոլարային արժեքի նվազումը հիմնականում պայմանավորվել է «Պատրաստի սննդի արտադրանք» և «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, քանի կարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքանմբերը, ի տարբերություն նախորդ եռամսյակների բացասական ազդեցությունների, ընթացիկ եռամսյակում ունեցել են համապատասխանաբար 3.1 և 6.0 տոկոսային կետ դրական նպաստումներ:


2009 թ. չորրորդ եռամսյակում համաշխարհային ապրանքային շուկաներում շարունակվել է գների աճը՝ հիմնականում արդեն գերազանցելով նախորդ տարվա մակարդակը: Գների աճը հիմնականում պայմանավորվել է համաշխարհային տնտեսության վերականգնման միտումներով: Վերջիններս, ներքին պահանջարկի նվազման տեմպերի դանդաղման հետ մեկտեղ, հանգեցրել են ներմուծման դոլարային արժեքի նվազման տեմպերի դանդաղմանը: Ներմուծման իրական ծավալների նվազման բարձր տեմպերը պահպանվել են: Ներմուծման նվազմանը մեծապես նպաստել են «Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ», «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, քանի կարժեք մետաղներ և դրանցից իրեր», «Հանքահումքային արտադրանք» և «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբերը, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 8.1, 2.4, 1.9, 1.7 տոկոսային կետ: «Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» ապրանքախումբն ունեցել է 3.8 տոկոսային կետ դրական ազդեցություն:

Արտաքին առևտրի աշխարհագրական բաշխվածության տեսանկյունից եական տեղաշարժեր չեն արձանագրվել, և պահպանվել են նախորդ եռամսյակի միտումները: Առևտրային հաշվեկշռի պակասուրդի նվազումը պայմանավորվել է երկրների բոլոր խմբերի հետ առևտրային հաշվեկշիռների պակասուրդների շարունակական նվազմանք: Մասնավորապես՝ Եվրոմիության երկրների հետ առևտրային հաշվեկշռի պակասուրդը նվազել է 103.7 մլն ԱՄՆ դոլարով (կամ 36.0%-ով), ԱՊՀ երկրների հետ՝ 38.5 մլն ԱՄՆ դոլարով (կամ 12.3%-ով): Առևտրային հաշվեկշռի պակասուրդի նվազումը ԱՄՆ-ի, Թուրքիայի, Չինաստանի և ճապոնիայի հետ կազմել է համապատասխանաբար 25.8 մլն ԱՄՆ դոլար, 26.4 մլն ԱՄՆ դոլար, 23.0 մլն ԱՄՆ դոլար, 27.0 մլն ԱՄՆ դոլար:

Ապրանքային հաշվեկշռի պակասուրդի նվազումն իր հերթին հանգեցրել է ծառայությունների հաշվեկշռի պակասուրդի նվազմանը. չորրորդ եռամսյակում վերջինս նվազել է տ/տ 24.6%-ով և կազմել 70.4 մլն ԱՄՆ դոլար: Պակասուրդի նվազումը հիմնականում պայմանավորվել է տրանսպորտային ծառայությունների հաշվեկշռի պակասուրդի նվազմանք: Տրանսպորտային ծառայությունների արտահանման նվազումը կազմել է տ/տ 10.5%, իսկ տրանսպորտային ծառայությունների ներմուծման նվազումը՝ տ/տ 19.0%: Զբոսաշրջության արտահանման ծավալները գրեթե պահպանվել են նախորդ տարվա չորրորդ եռամսյակի մակարդակում, իսկ ներմուծման ծավալներն ավելացել են տ/տ 5.0%-ով: Արդյունքում՝ ծառայությունների արտահանումը չորրորդ եռամսյակում նվազել է տ/տ 3.3%-ով, իսկ ծառայությունների ներմուծումը՝ տ/տ 10.8%-ով:

Ֆիզիկական աճածանց դրամական փոխանցումների³⁹ նվազման տեմպերը դանդաղել են՝ հիմնականում պայմանավորված Ռուսաստանի⁴⁰ տնտեսության զարգացումներով (նախորդ տարվա չորրորդ եռամսյակի համեմատ ՀՆԱ նվազման տեմպերը դանդաղել են և կազմել տ/տ 2.9%) և նախորդ տարվա չորրորդ եռամսյակում տրանսֆերտների ցածր մակարդակով: Միաժամանակ նշենք, որ բանկային համակարգով ոչ առևտորային բնույթի փոխանցումների նվազումը որոշակիորեն փոխատուցվել է կանխիկի ներհոսքի ավելացմանք, ինչը նկատվել է 2009 թ. ընթացքում:⁴¹ 2009 թ. չորրորդ եռամսյակում սեզոնային արտագնա աշխատողների աշխատուժից Եկամուտների զուտ ներհոսքը նվազել է տ/տ 20.4%-ով և կազմել 164.5 մլն ԱՄՆ դոլար: «Եկամուտ ներդրումներից» հոդվածով արձանագրվել է 72.6 մլն ԱՄՆ դոլարի զուտ արտահոսք: Արդյունքում՝ «Եկամուտներ» հոդվածով արձանագրվել է 92.0 մլն ԱՄՆ դոլարի զուտ ներհոսք: Մասնավոր տրանսֆերտների նվազման տեմպերը չորրորդ եռամսյակում դանդաղել են և կազմել տ/տ 21.8%:

**2009 թ. IV եռամսյակում
ընթացիկ հաշվի
պակասուրդը նվազել է
նախորդ տարվա նոյն
ժամանակահատվածի
մկանում**



3.2.2. Կապիտալի և ֆինանսական հաշվի

2009 թ. չորրորդ եռամսյակի ընթացքում կապիտալի և ֆինանսական հաշվով արձանագրվել է 337.4 մլն ԱՄՆ դոլարի զուտ ներհոսք (պահպանվել է նախորդ տարվա նոյն ժամանակահատվածի մակարդակում): Միջոցների զուտ ներհոսքը հիմնականում ապահովվել է պետական վարկերի և օտարերկրյա ուղղակի ներդրումների հաշվին: Այսուամենայնիվ, նշված միջոցների ներհոսքը բավարար չի եղել՝ ֆինանսավորելու ընթացիկ հաշվի պակասուրդը, ինչը հաճացեցրել է ՀՀ կենտրոնական բանկի զուտ արտաքին ակտիվների 72.7 մլն ԱՄՆ դոլարով նվազման:

Կապիտալի և ֆինանսական հաշվի առանձին հոդվածներով դրսորվել են հետևյալ շարժերը. կապիտալ տրանսֆերտների ներհոսքի ծավալները չորրորդ եռամսյակում կազմել են 37.5 մլն ԱՄՆ դոլար (նախորդ տարվա նոյն եռամսյակում՝ 45.5 մլն ԱՄՆ դոլար): Պետական վարկերի զուտ ներհոսքը 2009թ. չորրորդ եռամսյակում կազմել է 196.5 մլն ԱՄՆ դոլար:


Օտարերկրյա ուղղակի ներդրումները ընթացիկ եռամսյակում նվազել են տ/տ 65.3%-ով և կազմել 148.2 մլն ԱՄՆ դոլար:

³⁹ 2009թ. չորրորդ եռամսյակում արձանագրվել է բանկային համակարգի միջոցով իրականացվող ոչ առևտորային բնույթի զուտ փոխանցումների տ/տ 23.6% նվազում: Ընդ որում՝ ոչ առևտորային բնույթի փոխանցումների ներհոսքը կրծատվել է տ/տ 21.6%-ով, իսկ արտահոսքը՝ տ/տ 10.5%-ով:

⁴⁰ Ֆիզիկական աճածանց դրամական փոխանցումների հիմնական մասը ստացվում է Ռուսաստանից:

⁴¹ Հիմնականում պայմանավորված է տվյալ ժամանակահատվածում Ռուսաստանի բանկային համակարգի մկանում:

**2009 թ. IV եռամյակում
ընթացիկ հաշվի
պակասուրոր գերազանցել է
կապիտալի և ֆինանսական
հաշվով միջոցների գուտ
ներհոսքը**




«Այլ ներդրումներ»⁴² հոդվածով չորրորդ եռամյակում արձանագրվել է 44.7 մլն ԱՄՆ դոլարի գուտ արտահոսք, ինչը հիմնականում պայմանավորվել է մասնավոր հատվածի (առանց բանկերի) գուտ արտաքին ակտիվների 40.0 մլն ԱՄՆ դոլար աճով:

3.3. Տոկոսադրություններ, Փոխարժեք եւ ԴրամակարգաՅին Զարգացումներ

3.3.1. Տոկոսադրույթներ

2009 թ. չորրորդ եռամյակի ընթացքում ևս ԿԲ-ն շարունակել է իրականացնել տնտեսական ակտիվության խթանման և գների կայունության խնդիրների համադրմանն ուղղված դրամավարկային քաղաքականություն: Այս պարագայում, հաշվի առնելով արտաքին միջավայրում ձևավորված չափավոր գնաճային ծնշումները և այն հանգանաքը, որ ընթացիկ ժամանակահատվածում գնաճի վարքագիծն ու նակրոտնեսական միջավայրի զարգացումները հիմնականում համահունչ են եղել ԿԲ կանխատեսումներին, ՀՀ ԿԲ խորհուրդը վերաֆինանսավորման տոկոսադրույթը թողել է անփոփոխ սահմանելով 5.0%:

**ԿԲ գործառնությունների և
շուկայական ռեայոյի
տոկոսադրույթներ**




⁴² Բանկային համակարգի և այլ մասնավոր հատվածի գուտ արտաքին ակտիվները:

Միաժամանակ, պահպանելով մշտական հնարավորության գործիքների տոկոսադրույթները վերաֆինանսավորման տոկոսադրույթից հավասարաչափ հեռացված լինելու դրույթը, դրանք նույնպես մնացել են անփոփոխ՝ սահմանվելով համապատասխանաբար 2.00% և 8.00%:

2009 թ. չորրորդ եռամսյակում բանկային համակարգում նկատվել է ավելցուկային իրացվելիության բարձր նակարդակ, որն իր ազդեցությունն է ունեցել ԿԲ կողմից իրականացված գործառնությունների վրա: Սասնավորապես՝ եռամսյակի ընթացքում ԿԲ-ն շարունակել է յուրաքանչյուր չորեքշաբթի առաջարկել ռեպո համաձայնագրերի կարգում: Արդյունքում իրականացված ռեպո գործառնությունների միջին շաբաթական ծավալը կազմել է 5.7 մլրդ դրամ (նախորդ եռամսյակում՝ 12.3 մլրդ դրամ): Միաժամանակ, ԿԲ-ն շարունակել է կառուցվածքային գործիքի՝ երկարաժամկետ ռեպոյի կիրառումը, որը եռամսյակի ավարտին կազմել է 1.0 մլրդ դրամ (նախորդ եռամսյակում՝ 1.5 մլրդ դրամ):

**Չորրորդ եռամսյակի
ընթացքում ԿԲ կողմից
իրականացված ռեպո
գործառնությունների
ծավալը (մլն ԴՀ դրամ)**



Չորրորդ եռամսյակի ընթացքում առևտրային բանկերի կողմից կենտրոնական բանկում ներդրված ավանդի միջին օրական ծավալը կազմել է 4.5 մլրդ դրամ (նախորդ եռամսյակում՝ 13.2 մլրդ դրամ):


2009 թ. չորրորդ եռամսյակում միջքանակային և ներբանկային ռեպո շուկայում իրականացված գործառնությունների ծավալը կազմել է 146.9 մլրդ դրամ: 2009 թ. ռեպո շուկայի ընդհանուր շրջանառությունը նախորդ տարվա համեմատ նվազել է 78.1 մլրդ դրամով և կազմել 371.7 մլրդ դրամ, իսկ շուկայական ռեպո տոկոսադրույթը դեկտեմբերին կազմել է 5.79%՝ հունիսի 7.48%-ի և 2008թ. դեկտեմբերի 8.25%-ի փոխարեն: Առևտրային բանկերի միջև իրականացված գործառնությունների տեղաբարար կշիռն ընդհանուր ծավալում 2009թ. կազմել է 37.4% (նախորդ տարի՝ 48%):

Այս եռամսյակում տեղաբաշխվել է մոտ 10 մլրդ դրամի 33 պետական (գանձապետական) կարճաժամկետ պարտատոմս (նախորդ եռամսյակում՝ 14 մլրդ դրամի): 2009 թ. ընթացքում տեղաբաշխված ՊԿՊ ընդհանուր ծավալը նախորդ տարվա համեմատ ավելացել է 26.6 մլրդ դրամով և կազմել 57.7 մլրդ դրամ:

2009 թ. չորրորդ եռամսյակի ընթացքում պետական (գանձապետական) պարտատոմսերի առաջնային շուկայում տոկոսադրույթները նվազել են: 2009 թ. տեղաբաշխված կարճաժամկետ և միջնաժամկետ պարտատոմսերի միջին եկամտաբերությունները ժամանակահատվածի վերջի դրությամբ կազմել են 8.91% և 13.36%՝ հունիսի 10.68% և 13.84-ի փոխարեն:


Ինչպես ցույց է տալիս եկամտաբերության կորերի ուսումնասիրությունը, ՊԿՊ երկրորդային շուկայում եկամտաբերությունները միջին հաշվով նվազել են մոտ 1.0 տոկոսային կետով: Զգայիրեն փոփոխվել է կորի գոգվածությունը (0.18-ից 0.37), ինչը վկայում է երկարաժամկետ ու կարճաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույթների միջև տարբերության աճի մասին:

**Երկրորդային շուկայում
բարձրացել են
երկարաժամկետ
պարտասովովների
տոկոսադրույթները**




ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով վարկերի ու ավանդների տոկոսադրույթները դրսերել են հետևյալ միտումները. 2009թ. դեկտեմբերին ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով ներգրավված ավանդների տոկոսադրույթները կազմել են համապատասխանաբար 9.5% և 7.9%՝ 2009 թ. հունիսի համեմատ ՀՀ դրամով ներգրավված ավանդների տոկոսադրույթները նվազել են 1.1 տոկոսային կետով, իսկ ԱՄՆ դոլարով ներգրավված ավանդների տոկոսադրույթները՝ մնացել գրեթե անփոփոխ: Արդյունքում՝ ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով ավանդների տոկոսադրույթների տարբերությունը կազմել է 1.6 տոկոսային կետ՝ հունիսի 2.8-ի համեմատ:

**Բանկային համակարգի
կողմից ներգրավված
ավանդների
տոկոսադրույթները**



**Բանկային համակարգի
կողմից սրամադրված
վարկերի
տոկոսադրույթները**



2009 թ. դեկտեմբերին ՀՀ դրամով տրամադրված վարկերի տոկոսադրույքները կազմել են 18.1%, իսկ ԱՄՆ դոլարով տրամադրված վարկերի տոկոսադրույքները՝ 14.5%՝ 2009 թ. հունիսի համեմատ դրամով վարկերի տոկոսադրույքները նվազել են 0.4 տոկոսային կետով, իսկ ԱՄՆ դոլարով վարկերինը՝ 1.4 տոկոսային կետով: Արդյունքում՝ 2009 թ. դեկտեմբերին ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով վարկերի տոկոսադրույքների տարբերությունը կազմել է 3.6 տոկոսային կետ՝ հունիսի 2.6-ի փոխարեն:

2009 թ. դեկտեմբերին ՀՀ դրամով վարկերի ու ավանդների տոկոսադրույքների տարբերությունը կազմել է 8.6 տոկոսային կետ՝ հունիսի 7.9-ի փոխարեն՝ աճելով 0.7 տոկոսային կետով, իսկ ԱՄՆ դոլարով վարկերի ու ավանդների տոկոսադրույքների տարբերությունը կազմել է 6.6 տոկոսային կետ՝ հունիսի 8.1-ի փոխարեն՝ նվազելով 1.5 տոկոսային կետով:

2009 թ. դեկտեմբերին, նախորդ եռամսյակի համեմատ, ՀՀ դրամով ներգրավված ավանդների տոկոսադրույքները մնացել են անփոփոխ, իսկ ԱՄՆ դոլարով ներգրավված ավանդների տոկոսադրույքները՝ նվազել 0.5 տոկոսային կետով: Ինչ վերաբերում է վարկերի տոկոսադրույքներին, ապա ՀՀ դրամով տրամադրված վարկերի տոկոսադրույքներն աճել են 0.7 տոկոսային կետով, իսկ ԱՄՆ դոլարով տրամադրված վարկերի տոկոսադրույքները մնացել են գրեթե անփոփոխ:


3.3.2. Փոխարժեք

ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի միջին շուկայական փոխարժեքը 2009 թվականի չորրորդ եռամսյակի վերջին, նախորդ եռամսյակի վերջի համեմատ, արժենորոշել է 1.69%-ով՝ 384.28 դրամից հասնելով 377.89 դրամի: Չորրորդ եռամսյակում ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի միջին եռամսյակային փոխարժեքը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արժեզորկվել է 20.29%-ով՝ 306.41 դրամից հիմնելով 384.40 դրամի: Նախորդ տարի նույն ցուցանիշը կազմել էր +3.48%:


2009 թ. վերջին, նախորդ տարվա վերջի համեմատ, դրամի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզորկվել է 18.83%-ով:

Եռամսյակի ընթացքում միջքանկային շուկայում իրականացված գործառնությունների համախառն ծավալը կազմել է 2366 մլն ԱՄՆ դոլար, որը 13.9%-ով կրճատվել է նախորդ տարվա չորրորդ եռամսյակի գործառնությունների ծավալի համեմատ (2749 մլն ԱՄՆ դոլար), իսկ տարեկան կտրվածքով նվազումը կազմել է 0.4%՝ 8720 մլն-ի փոխարեն՝ 8685 մլն ԱՄՆ դոլար:

ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքի շարժը՝ 2009 թ.



**77 արժութային շուկայում
4-րդ եռամյակում
իրականացված
գործառնությունների
ծավալները**




Եվրո/դրամ գործառնությունների շուկայում 2009 թ. չորրորդ եռամյակում ծավալները նվազել են: Համախառն ծավալը կազմել է 211.50 մլն եվրո, որը նախորդ տարվա չորրորդ եռամյակի համեմատ 14%-ով պակաս է: Իսկ տարեկան գործառնությունների ծավալը ավելացել է 24.35%-ով և կազմել 962.60 մլն եվրո:

Դրամի առաջարկը կարգավորելու և լողացող փոխարժեքի քաղաքականության սկզբունքների ներքո դրամի փոխարժեքի տատանումները մեջմելու նպատակով ՀՀ կենտրոնական բանկը չորրորդ եռամյակում ՀՀ բանկերից գնել է 8.49 մլն, վաճառել՝ 102.63 մլն ԱՄՆ դոլար, իսկ տարեկան կտրվածքով առջը կազմել է 40.56 մլն, վաճառքը՝ 736.66 մլն ԱՄՆ դոլար:

2009 թվականի չորրորդ եռամյակի ընթացքում ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքի տ/տ արժեգրկման բարձր տեմպերի պահպանումը և գործընկեր երկրների՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ փոխարժեքների միջին կշռված արժեորումը հանգեցրել են ՀՀ դրամի անվանական արդյունավետ փոխարժեքի տ/տ 20.6 տոկոս, իսկ Եռ/Եռ՝ 5.4% արժեգրկման: Անվանական արդյունավետ փոխարժեքը 2009 թ. դեկտեմբերին տ/տ արժեգրկվել է 19.9 տոկոսով:

Հայաստանում միջին եռամյակային գնաճը 2009 թ. չորրորդ եռամյակում կազմել է տ/տ 4.9%, իսկ գործընկեր երկրների միջին կշռված գնաճը՝ տ/տ՝ 3.9%: Գործընկեր երկրների միջին կշռված գնաճի վրա մեծ է եղել հատկապես Ռուսաստանի և Ուկրաինայի գնաճի նպաստումը՝ համապատասխանաբար 1.9 և 1.0-ական տոկոսային կետով: Արդյունքում՝ համադրվելով նաև անվանական փոխարժեքի արժեգրկման հետ, իրական արդյունավետ փոխարժեքը 2009 թվականի չորրորդ եռամյակում արժեգրկվել է տ/տ 20.0%-ով (նախորդ եռամյակում տ/տ 7.9% արժեգրկում), իսկ 2009թ. դեկտեմբերին, նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ, իրական արդյունավետ փոխարժեքի արժեգրկումը կազմել է 18.1%: Իրական փոխարժեքի ճշգրտումը 2009 թ. բավականին նպաստավոր պայմաններ է ստեղծել առևտրային հաշվեկշռի պակասուրդը բարելավելու և իրական ՀՆԱ-ի կրծատումը մեղմելու համար:


**2009թ. չորրորդ
եռամյակում իրական և
անվանական
փոխարժեքների
արժեգրկումը խորացել է**



2009 թվականի չորրորդ եռամսյակում ներքին իրական փոխարժեքն արժևորվել է տ/տ 2.9%-ով (նախորդ եռամսյակում՝ 18.1%), որը արտահանելի հատվածի գների նկատմամբ ոչ արտահանելի հատվածի գների գերազանցող աճի հետևանք է:

Ոչ արտահանելի ապրանքների և ծառայությունների գները չորրորդ եռամսյակում տ/տ աճել են 10.5%-ով, իսկ արտահանելի ապրանքների գները նախորդ տարվա համեմատությամբ աճել են 7.42 տոկոսով (նախորդ եռամսյակում՝ համապատասխանաբար 17.3 և -0.7%-ով): Չորրորդ եռամսյակում արտահանելի ապրանքների գների տ/տ աճը պայմանավորվել է ՀՀ դրամի անվանական փոխարժեքի տ/տ արժեզրկմամբ և միջազգային գների տ/տ աճով, իսկ ոչ արտահանելի հատվածի գների աճը՝ հիմնականում գազի և էլեկտրաէներգիայի սակագների տ/տ աճով:


**Չորրորդ եռամսյակում
ներքին իրական
փոխարժեքի արժևորման
տեմպերը նկազել են**



3.3.3. Դրամավարկային զարգացումներ⁴³

2009 թվականի չորրորդ եռամսյակը որոշակիորեն տարբերվել է նախորդ եռամսյակներից այն առունով, որ մակրոտնտեսական կայունացման շարունակվող միտունների ակնհայտ դրսևորումը եղավ տնտեսական անկման տեմպերի դանդաղումը: Այս պայմաններում ԿԲ-ն շարունակել է տնտեսական ակտիվության խթանման և գների կայունության ապահովման խնդիրների արդյունավետ համադրմանը նպատակառությամբ դրամավարկային քաղաքականության իրականացումը, ինչի արդյունքում այս եռամսյակում ևս արձանագրվել են դրամավարկային ցուցանիշների համեմատաբար բարձր աճի տեմպեր: Դրամային զանգվածն աճել է 7.0%-ով՝ պայմանավորված հիմնականում շրջանառության մեջ գտնվող կանխիկի 11.1% աճով, իսկ դրամային ավանդներն աճել են ընդամենը 0.8%-ով: Քարել է փաստել, որ նշված ցուցանիշների տարեկան փաստացի միտունները հիմնականում համընկել են ակնկալիքներին: Դրամային զանգվածն ու դրամային ավանդները նվազել են համապատասխանաբար 16.2% և 24.1%-ով, իսկ շոշանառությունում եղած կանխիկը՝ 10.6%-ով:

**2009 թվականի երկրորդ
կեսից իրականացված
ընդամողական
դրամավարկային
քաղաքականությունը
ազդեցություն է ունեցել
փողի ազրեցատների վրա**




⁴³ 2008 թ. երրորդ եռամսյակից սկսած՝ «Գնաճի հաշվետվություն» պարբերականում հրապարակվել են ավանդային կազմակերպությունների՝ ԿԲ-ի, առևտորային բանկերի և վարկային կազմակերպությունների անդուիդ հաշվետվություններ:

Ընթացիկ եռամսյակում շարունակվել է տնտեսության դոլարայնացման մակարդակի աճը, ինչն արտահայտվել է արտարժութային ավանդների դրամային արտահայտությամբ եռ/եռ 13% և տարեկան 114.4% աճով (դոլարային արտահայտությանք աճը համապատասխանաբար կազմել է 14.9% և 74.0%): Համեմատության համար նշենք, որ նախորդ եռամսյակում այդ ցուցանիշը աճել էր եռ/եռ 13.8% և տ/տ 118.9%-ով:

Չորրորդ եռամսյակում արտարժութային ավանդների աճի հիմնական մասն ապահովվել է ներգրավված ցափահանջ միջոցների ավելացման հաշվին՝ 18.2%, իսկ ժամկետային միջոցներն ավելացել են 10.7%-ով, այն դեպքում, երբ տարեկան կտրվածքով առավել մեծ է եղել ժամկետային արտարժութային ավանդների աճը՝ 2.4 անգամ (147.5 մլրդ դրամ), իսկ ցափահանջ արտարժութային ավանդներն աճել են 1.7 անգամ (46.7 մլրդ դրամ): Ենիշ է, չորրորդ եռամսյակում դրամային ավանդների էական շարժեր չեն գրանցվել, այդուհանդերձ, տարեկան կտրվածքով դրամային ժամկետային ավանդները նվազել են 47.6%-ով (58.2 մլրդ դրամ), իսկ ցափահանջ՝ աճել ընդամենը 4.7%-ով: Այսինքն՝ նշվածը փաստում է, որ տարվա ընթացքում, պայմանավորված փոխարժեքի կտրուկ արժեզրկմանք, դրսերվել է արժույթի փոխարինման երևույթ, և համակարգում ներդրված դրամային խնայողությունները վերածվել են արտարժութայինի:

Դոլարայնացման տեմպերի առաջացման հետևանքով 2009 թվակամին ավանդների կառուցվածքում կրկին փոխվել է դրամ/արտարժույթ ավանդների հարաբերակցությունը՝ հօգուտ արտարժութայինի




Փողի զանգվածի բաղադրատարրերի վերոնշյալ շարժերի արդյունքում աճել է եռ/եռ 9.6%-ով և տ/տ 15.1%-ով:

Ըստ առաջարկի գործոնների՝ փողի ագրեգատները աճել են բացառապես ավանդային կազմակերպությունների ԶԱԱ-ի հաշվին, որի եռ/եռ աճը կազմել է 30.8% կամ 108.1 մլրդ դրամ, իսկ ԶԱԱ-ն այդ ժամանակահատվածում նվազել է 9.3%-ով կամ 36.8 մլրդ դրամով:


Չորրորդ եռամսյակում պահպանվել են տնտեսության վարկավորման աշխուժացման միտունները, որն այս ընթացքում ևս հիմնականում պայմանավորվել է ՀՀ ԿԲ և Կառավարության կողմից համատեղ իրականացվող հակածնաժամային միջոցառումների շրջանակներում բանկային համակարգի միջոցով տնտեսությանը վարկային միջոցների տրամադրմանք: Այդ պարագայում վարկավորման ծավալներն աճել են եռ/եռ 6.8%-ով, իսկ տ/տ 13.0%-ով: Ընդ որում, չնայած տնտեսությունում ընթացող դոլարայնացման գործընթացին, չորրորդ եռամսյակում դրսերվել է արտարժութային վարկերի համեմատ դրամային վարկերի առաջանցիկ աճ, սակայն վերջինիս տեմպերը դեռևս շարունակել են մնալ ոչ բավարար: Այսպես, չորրորդ եռամսյակում դրամով վարկավորման ծավալներն ավելացել են 11.9%-ով, իսկ դրամային արտահայտությամբ արտարժույթով վարկերը՝ ընդամենը 2.0%-ով (դոլարային արտահայտությամբ աճը կազմել է 3.7%), մինչդեռ տարեկան կտրվածքով այդ ցուցանիշը համար կազմել է 9.9% նվազում և 45.1% աճ (17.8%): Վարկավորման ցուցանիշի տարեկան վարքագծի արդյունքում վարկավորման ընդհանուր ծավալում դրամ/արտարժույթով տրամադրված միջոցների համամասնությունը նախորդ տարվա վերջի համեմատ այս տարեվերջին կրկին փոխվել է արտարժութայինի օգտին՝ 61/39-ի փոխարեն 49/51:

2009 թվականի չորրորդ եռամյակում արծանագրվել է արտարժույթով վարկերի համենասու դրամային վարկերի առաջանցիկ աճ




2009 թվականին տնտեսության դոլարայնացման շարունակական աճի արդյունքում չորրորդ եռամյակում այդ ցուցանիշը (արտարժութային ավանդներ/փողի զանգված) կազմել է 44.7%, որն ավելի քան 1.8 անգամ գերազանցել է նախորդ տարվա նույն ցուցանիշը, ինչպես նաև 3.1%-ով աճել է նախորդ եռամյակի համեմատ:

2009թ. երկրորդ եռամյակից ստացված փողայնացման և դրամայնացման գործակիցները որոշակիորեն աճել են



Ֆինանսական միջնորդությունը բնութագրող մյուս ցուցանիշները՝ փողի և դրամային բազմարկիչները տարվա ընթացքում նվազել են՝ համապատասխանաբար 2.7% և 18.7%-ով, սակայն երկրորդ կեսին, ծավալային ընդլայնման ազդեցությամբ, նվազման տեմպերը զգալիորեն դանդաղել են և հետագայում ել կշարունակվեն:


Փողի և դրամային բազմարկիչները




Փողի բազա

Կայունացման միտումների պայմաններում և ԿԲ կողմից հատկապես տարվա երկրորդ կեսին իրականացված ընդլայնողական դրամավարկային քա-

Դաքականության արդյունքում չորրորդ եռամսյակում ևս ԿԲ-ն բավականին բարձր տեմպերով ավելացրել է փողի առաջարկը: Դեկտեմբերի վերջի դրությամբ փողի բազայի եռամսյակային աճը կազմել է 10.8%՝ նախորդ եռամսյակի 13.2%-ի փոխարեն, այն դեպքում, եթե առաջին կիսամյակում փողի բազան նվազել է 9.3%-ով: Փողի բազայի կառուցվածքում, պայմանավորված տարեվերջին կանխիկ դրամի նկատմամբ պահանջարկի՝ սովորաբար դրսևորվող սեզոնային աճով, այս եռամսյակում աճի հիմնական մասն ապահովվել է ԿԲ-ից դրւս կանխիկի հաշվին՝ 13.8%:



ԿԲ-ից դուրս գտնվող կանխիկ դրամի վերջին տարիների վարքագերի համարումից կարելի է փաստել, որ այս տարի հիմնականում կրկնվել է 2008 թվականին այդ ցուցանիշի ցուցաբերած վարքագիծը, միայն այն տարբերությամբ, որ այս տարվա առաջին եռամսյակուն արձանագրվել է ԿԲ-ից դուրս կանխիկի անհամեմատ արագ տեմպերով նվազում, իսկ տարեվերջին՝ ավելի արագ տեմպերով աճ:



3.4. ՀԱՄԱԻՆԱՌԵ ՊԱՐԱՆԶԱՐԿ ԵՎ ԱՌԱՋԱՐԿ

3.4.1. Համախառն պահանջարկ

Ներքին պահանջարկ

Մասնավոր սպառում և ներդրումներ⁴⁴. 2009 թվականի չորրորդ եռամսյակում դրսնորվել են ներքին պահանջարկի անկման տեմպերի բարելավման միտումներ՝ հիմնականում պայմանավորված Կառավարության կողմից իրականացված հակաճնաժամային ծրագրերի արդյունքում պետական ծախսերի զգալի աճով: Ներքին պահանջարկի անկման տեմպերի բարելավմանը նպաստել են նաև մասնավոր ծախսումները:

⁴⁴ Սասնավոր սպառման և ներդրումների իրական աճի չորրորդ եռամյակի ցուցանիշները ՀՀ ԿԲ գնահատումներն են: Նշված ցուցանիշների փաստացի թվերը 2009 թվականի երրորդ եռամյակի դրույթամբ են: Ենթաքանում ներկայացված իրական աճի գնահատումները նախորդ տարվա նույն երանակի մնացածնային են: Խել ասս ըստ նշված է:

2009 թվականի չորրորդ եռամսյակում ներքին պահանջարկն իրական արտահայտությամբ նվազել է շուրջ 6%-ով՝ նախորդ եռամսյակի նույն ցուցանիշի համեմատ բարելավվելով 11.6 տոկոսային կետով: Ընդ որում՝ պետական ծախսերի իրական աճը նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ կազմել է 7.7%՝ արտացոլելով Կառավարության իրականացրած հարկաբյուջետային ընդլայնողական քաղաքականության արդյունքները:


2009 թվականի չորրորդ եռամսյակի ընթացքում մասնավոր ծախսումներն իրական արտահայտությամբ նվազել են շուրջ 8%-ով՝ նախորդ եռամսյակի նույն ցուցանիշի համեմատ բարելավվելով 11.8 տոկոսային կետով: Մասնավոր ծախսումների կառուցվածքում ներդրումների նվազումը կազմել է շուրջ 23%՝ արտացոլելով բնակչության և կազմակերպությունների միջոցների հաշվին իրականացված շինարարության ավելի քան 38% նվազումը: Մասնավոր սպառման նվազումը կազմել է 0.4%՝ պայմանավորված նախորդ տարվա համեմատ մասնավոր տնօրինվող եկամուտների նվազմամբ: Զնայած շարունակվող անկման տեմպերին, կարելի է փաստել, որ չորրորդ եռամսյակում մասնավոր ներդրումների և մասնավոր սպառման անկման տեմպերը նախորդ եռամսյակի համեմատությամբ բարելավվել են համապատասխանաբար 24 և 1.5 տոկոսային կետերով՝ արտացոլելով ճգնաժամի աստիճանական հաղթահարման գործնթացի արդյունքները:

Չորրորդ եռամսյակի ընթացքում մասնավոր հատվածի ծախսումները զայտ ազդեցություն են ունեցել գնածի վրա: Ըստ ՀՀ ԿԲ գնահատումների՝ մասնավոր իրական ծախսումների գնահատված մակարդակը ցածր է եղել հավասարակշիռ մակարդակից 3-4%-ով՝ սպառողական շուկայում առաջացնելով 1-1.2% գնաճնկումային ճնշումներ: Յարկ է նշել, սակայն, որ մասնավոր ծախսումների կազմում զգալի կրծատվել է երկարաժամկետ ապրանքների սպառումը, որը ՍԳԻ փոփոխության վրա էական ազդեցություն չի ունենում:

Պետական սպառում և ներդրումներ⁴⁵: Չորրորդ եռամսյակում շարունակվել է համախառն պահանջարկի վրա հարկաբյուջետային քաղաքականության ընդլայնող ազդեցության դրսնորում՝ պայմանավորված Կառավարության կողմից հակածածանային ծրագրերի հրագործման արդյունքում պետական ծախսերի և տնտեսությանը վարկավորման ծավալների աճով:

Ըստ հաշվարկված հարկաբյուջետային ազդակների, պետական հատվածը ամբողջական պահանջարկի վրա ունեցել է 7.8 տոկոսային կետ ընդլայնող ազդեցություն՝ պայմանավորված եկամուտների և ծախսերի ընդլայնող ազդակների ծևավորմամբ:


2009 թվականի չորրորդ եռամբյուջետային ազդակն ունեցել է ընդլայնող ազդեցություն



⁴⁵ Հարկաբյուջետային հատվածի վերլուծությունը կատարվել է 2009 թ. չորրորդ եռամսյակի և տարեկան հանախմբված բյուջեի նախնական փաստացի ցուցանիշների հիման վրա: Ընդ որում համախառն պահանջարկի վրա ազդեցության գնահատման նախառակով պետական ծախսերում ներառվել են նաև տնտեսության գուտ վարկավորումը: Ազդակների հաշվարկներում նույնական օգտագործվել են համախմբված բյուջեի չորրորդ եռամսյակի նախնական ցուցանիշները, իսկ հաշվարկները կատարվել են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ համադրելի վիճակագրական քազայի հիման վրա:

Ինչպես տարվա առաջին ինն ամիսներին, այնպես էլ չորրորդ եռամյակում ՀՀ տնտեսության ակտիվության անկումը իր շարունակական բացասական ազդեցությունն է ունեցել պետական բյուջեի՝ մասնավորապես հարկային եկամուտների հավաքագրման մակարդակի վրա: Արդյունքում ՀՀ բյուջեի եկամուտները զգալիորեն ցածր էին ՀՀ Կառավարության կողմից սահմանված եռամյակային համանասնություններով նախատեսված ցուցանիշից: Սակայն, չորրորդ եռամյակում տնտեսական անկնան նվազման միտումը արդեն իսկ դրական նախադրյալ էր հարկային եկամուտների նվազման տեմպի թուլացման համար: Ընդհանուր առնամբ, եռամյակի արդյունքում, ՀՆԱ նկատմամբ եկամուտների առաջանցիկ անկնան պայմանավորված, ամբողջական պահանջարկի վրա եկամուտների ազդեցությունը գնահատվել է ընդլայնող, որը կազմել է 2.3 տոկոսային կետ:

Համախմբված բյուջեի ծախսերի մեջ 2009 թվականի չորրորդ եռամյակում փոքր-ինչ նվազում է արձամագրվել միայն տրամաֆերտների գծով



Ծախսերի գծով չորրորդ եռամյակի համար հաշվարկված ազդակը կազմել է 5.5⁴⁶ տոկոսային կետ ընդլայնող, որը պայմանավորված է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ծախսերի և տնտեսության վարկավորման ծավալների աճով, ինչպես նաև ՀՆԱ ցածր մակարդակով: Չորրորդ եռամյակում պետական ծախսերը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ավելացել են շուրջ 35 %-ով՝ ներառյալ տնտեսության ուղղված գուտ վարկավորումը: Ընդ որում, ընթացիկ ծախսերն ավելացել են 11.7 %-ով, իսկ «Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ» հոդվածի գծով ծախսերը՝ 50 %-ով: Ընթացիկ ծախսերի մեջ պետական սպառումը տ/տ աճել է մոտ 12 %-ով, իսկ սոցիալական նպաստների և կենսաթոշակների աճը տ/տ կազմել է 14.8 %:

«Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ (կապիտալ ծախսեր)» հոդվածի գծով ծախսերը ինչպես 2009 թ. առաջին ինք ամիսներին, այնպես էլ չորրորդ եռամյակում էապես աճել են և ներքին, և արտաքին՝ ԾԻԳ-երի միջոցով իրականացվող ֆինանսավորման աղբյուրների հաշվին: Նշված հոդվածի գծով ծախսերի կառուցվածքում ներքին աղբյուրների հաշվին իրականացվող ծախսերի կշիռը կազմել է 68 %, իսկ արտաքին ֆինանսավորման կշիռը՝ 32 % (նախորդ տարի, համապատասխանաբար՝ 77 % և 23 %):

Կառավարության հակաճնաժամային ծրագրերի հիմնական մասի իրականացումը, հետևաբար պետական հատվածի ընդլայնող ազդեցությունը, ինչպես և սպասվում էր, դրսնորվեց տարվա երկրորդ կեսին: Եկամուտների և ծախսերի վերը նշված ցուցանիշների պարագայում չորրորդ եռամյակում ձևավորված պակասուրդը կազմել է տարվա պակասուրդի մեկ երրորդը: Վերջինիս 92%-ը ֆինանսավորվել է արտաքին և 8 %-ը՝ ներքին աղբյուրների հաշվին:


Ամփոփելով տարվա արդյունքները՝ նշենք, որ ընդհանուր եկամուտների նվազումը կազմել է 14.4 %: Ընդ որում՝ հարկային եկամուտների նվազումը կազ-

⁴⁶ Ըստ հարկայութետային ազդակների գործող մեթոդաբանության՝ եկամուտների ազդակի հաշվարկում օգտագործվող ՀՆԱ-ն փաստացի անվաճական ՀՆԱ-ն է, իսկ ծախսերի ազդակում՝ պոտենցիալ ՀՆԱ-ն:

մել է 16.1 %, իսկ հարկեր /ՀՆԱ ցուցանիշը՝ 16.5 %` նախորդ տարվա համեմատ նվազելով 0.6 տոկոսային կետով: Տարեկան կտրվածքով ծախսերի աճը, ներառյալ զուտ վարկավորումը, տ/տ կազմել է 21 %, իսկ ծախսեր/ՀՆԱ ցուցանիշը՝ 31%՝ նախորդ տարվա համեմատ ավելանալով 8.3 տոկոսային կետով:

Այսպիսով, Կառավարությունը ներքին պահանջարկի խթանման միջոցով իրականացրել է տնտեսական անկանոն մեղմացնանք նպատակաուղղված ընդլայնողական հարկաբյուջետային քաղաքականություն, որը, ըստ հարկաբյուջետային ազդակի գնահատված ցուցանիշի, կազմել է շուրջ 8 տոկոսային կետ ընդլայնող:

2009 թվականի չորրորդ եռամյակում պակասուրդի ֆինանսավորմամբ աղյուղներում գերակշռել է արտաքին ֆինանսավորումը



Սակրունական հիմնական ցուցանիշները 2008 և 2009 թթ. չորրորդ եռամյակներում (իրական արտահայտությամբ)

Ցուցանիշներ	2008-IV/2007-IV	2009-IV/2008-IV
Իրական ՀՆԱ	11.1	-20.8
Ներքին պահանջարկ	11.3	-16.6
Սպառում	7.8	-5.2
Պետական	5.7	-10.7
Մասնավոր	8.2	-4.1
Կապիտալ ներդրումներ	17.4	-35.2
Պետական	-11.4	14.5
Մասնավոր	19.7	-38.2
Արտահանում ⁴⁷	-6.9	-5.0
Ներմուծում	12.9	-18.0

3.4.2. Համախառն առաջարկ⁴⁸

Համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետևանքով առաջացած տնտեսական անկումը 2009 թվականի երկրորդ եռամյակում հասնելով իր առավելագույն մակարդակին (տ/տ 21.8%) հաջորդ եռամյակների ընթացքում դրսնորել է նվազման միտումներ՝ հիմնականում պայմանավորված խթանող հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների արդյունքում մակրոտնտեսական իրավիճակի աստիճանական բարելավմանը: Ինչպես ակնկալվում էր, չորրորդ եռամյակում արձանագրվել է անհամեմատ փոքր՝ տ/տ 5.3% տնտեսական անկում, որի պարագայում հունվար-դեկտեմբերի տնտեսական անկանում ցուցանիշը նվազել է մինչև տ/տ 14.4%: Ընդ որում՝ եռամյակի ընթացքում, բացառությամբ շինարարության ճյուղի, որտեղ անկանում տեմպերը նվազել են, տնտեսության մյուս ճյուղերում արձանագրվել է աճ:

Արդյունարերության ճյուղում արձանագրվել է ավելացված արժեքի շուրջ տ/տ 1.4% աճ (հունվար-դեկտեմբերի՝ տ/տ 7.6% նվազում)՝ հիմնականում պայմանավորված մետաղագործական արդյունաբերության և մետաղի հանքաքարերի արդյունահանման ենթաճյուղերի աճով:

⁴⁷ Վերաբերում է ապրանքների և ծարայությունների արտահանման ու ներմուծմանը:

⁴⁸ Այն ցուցանիշները նախորդ տարվա չորրորդ եռամյակի նկատմամբ են, եթե այլ բան նշված չէ:

Մասնավորապես, մետաղի հանքաքարերի արդյունահանման և մետաղագործական արդյունաքերությունում 2009 թվականի հունվար-դեկտեմբերին արտադրության ծավալների իրական աճը կազմել է համապատասխանաբար 10% և 20.9%, որն արձանագրվել է իհմնականում չորրորդ եռամսյակում մետաղների համաշխարհային գների շարունակական աճի հետևանքով։ Եռամսյակի ընթացքում զգալի ավելացվել են այլումներ փայլաթիթեղի (շուրջ 2 անգամ), այլումներ գլամվածքի (1.8 անգամ), պղնձի և ցինկի խտանյութի (համապատասխանաբար 39.4% և 66.6%) և ֆերոմոլիբդենի (13.6%) արտադրության ծավալները։ Հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածում աճ է արձանագրվել նաև ռեսիներ և պլաստմասսայի արտադրատեսակների արտադրության և ծխախոտային արտադրատեսակների արտադրության ենթաճյուղերում՝ համապատասխանաբար 16.7% և 17.6%։

Մնացի արդյունաքերությունում 2009 թվականի հունվար-դեկտեմբերին արտադրության ծավալների իրական նվազումը կազմել է տ/տ 6.2%։ Եռամսյակի ընթացքում այլուրի և մակարոններին արտադրության ծավալները նվազել են համապատասխանաբար 5.9% և 7.8%-ով՝ հացահատիկի ցածր բերքի ստացման հետևանքով⁴⁹։ Շարունակել են զգալի նվազել կոնյակի (33.6%), կենդանական յուղի (42.9%), պահածոների (57.1%), ոչ ալկոհոլային ըմպելիքների (8.1%) և աղի (14.4%) արտադրության ծավալները։

Արտադրության ծավալները նվազել են շինանյութերի արտադրությունում (հունվար-դեկտեմբերին՝ 24.3%)՝ իհմնականում պայմանավորված շինարարության ծավալների կրծատման հետևանքով չորրորդ եռամսյակում ցեմենտի, պարանքային բետոնի, այլումներ և մետաղալլաստե իրերի արտադրության ծավալների նվազմանք և քիմիական արդյունաքերությունում (հունվար-դեկտեմբերին՝ 34.1%)՝ պայմանավորված կառուստիկ սոդայի արտադրության ծավալների կրծատմանք և սինթետիկ կորունդի արտադրության դադարեցմանք։

Տնամ զարգացումների պայմաններում չորրորդ եռամսյակի ընթացքում ենթաճյուղիկայի ենթաճյուղում արձանագրվել է տ/տ 11.6% աճ՝ ի հաշիվ ՀԵԿ-երի, ՀԱԷԿ-երի և հողմային էկ-երի արտադրության ծավալների աճի։

Շինարարության ճյուղում, կապիտալ ներփակում կրծատման և եկամուտների նվազման պարագայում, ի տարբերություն նախորդ եռամսյակների, արձանագրվել է ավելացված արժեքի համեմատաբար փոքր անկում՝ շուրջ 19.2%, որի պարագայում հունվար-դեկտեմբերի անկման ցուցանիշը կազմել է 42.3%։ Հատկանշական է, որ հունվար-դեկտեմբերին առավելապես նվազել են բնակչության հաշվին իրականացվող անհատական շինարարության ծավալները՝ տ/տ 70.5%, մինչդեռ կազմակերպությունների մասով արձանագրվել է թեև փոքր, բայց դրական աճ՝ տ/տ 4.3%։

Արդյունքում, տեղի է ունեցել շինարարության ֆինանսավորման աղբյուրների էական կառուցվածքային փոփոխություն. բնակչության միջոցների հաշվին իրականացվող շինարարության կրծատումը ուղեկցվել է կազմակերպությունների, միջազգային վարկերի, պետական բյուջեի և համայնքների միջոցների հաշվին իրականացվող շինարարության աճով։

Շինարարության ճյուղային բաշխվածության տեսանկյունից՝ հունվար-դեկտեմբերին առավելապես նվազել է առևտորի (54.2%), բնակարանային (65.4%), կոմունալ, սոցիալական և անհատական ծառայությունների (32.2%) և կրթության (25.9%) ճյուղերում իրականացվող շինարարությունը, մինչդեռ էներգետիկայի (2.8 անգամ), ֆինանսական գործունեության (3.8 անգամ), առողջապահության (5.2 անգամ), տրանսպորտի և կապի (22%), մշակող արդյունաքերության (10.3%) ենթաճյուղերում արձանագրվել է բարձր աճ։

⁴⁹ 2009 թվականին շուրջ 170 հազ. ցանքատարածքներից հավաքվել է մոտ 340 հազ. տոննա համախառն բերք՝ նախորդ տարվա 400 հազ. տոննայի փոխարեն։ Անձրևային եղանակը իհմնականում նպաստել է հացահատիկի մշակմանը, սակայն եղել են նաև կարկտահարման և գերխոնավացման դեպքեր։ Ցածր բերքատվության հիմնական պատճառը ոչ բարձր բերքատու սերմերի օգտագործումն է, ցանքաշրջանառության բացակայությունն ու միակողմանի պարարտացումն։


Գյուղատնտեսության ավելացված արժեքը տարվա չորրորդ եռամյակում աճել է տ/տ շուրջ 2.1%-ով, որի պարագայում հունվար-դեկտեմբերին ավելացված արժեքի անկումը կազմել է տ/տ 0,1%: Ընդ որում, հունվար-դեկտեմբերին անասնապահությունում արձանագրված 1% աճը պայմանավորվել է անասնապահության հիմնական մթերքի (բացառությամբ կաթի) արտադրության ծավալների ավելացմամբ: Այսպես սպանի համար իրացված անասունի և թռչնի, ինչպես նաև ձվի ծավալները ավելացել են համապատասխանաբար 0,2%-ով և 9,4%-ով:

Բուսաբուծության ենթաճյուղում համախառն արտադրանքի նվազումը հիմնականում պայմանավորվել է նախորդ տարվա համեմատ հունվար-դեկտեմբերին հացահատիկային և հացահատիկաղնդեղենային մշակաբույսերի բերքի ծավալների՝ 9,7%, կարտոֆիլի՝ 8,5%, բանջարանցային մշակաբույսերի՝ 0,7% և կերային մշակաբույսերի՝ 0,8% նվազմամբ: Միևնույն ժամանակ, նախորդ տարվա համեմատ հարուստ բերք է ստացվել պտղի և հատապտղի (4,5%), բուսաբուծության մշակաբույսերի (18,6%) և խաղողի (12,3%) գծով: Արդյունքում՝ բուսաբուծության համախառն արտադրության իրական անկումը հունվար-դեկտեմբերին կազմել է 0,7%:

Ծառայությունների ոլորտում ինչպես եռամյակի ընթացքում, այնպես էլ հունվար-դեկտեմբերին արձանագրվել է 0,7% աճ: Այս տեմպը նվազել է հիմնականում մեծածախ/առևտորի (առավելապես նվազել է սպառողական ապրանքների և գյուղատնտեսական արտադրանքի առևտորի շրջանառությունը) և ավտոմեքնաների առևտորի անկման պատճառով: Հունվար-դեկտեմբերին արձանագրվել է համապատասխանաբար տ/տ 7,9% և տ/տ 38,2% նվազում:

Միևնույն ժամանակ, մատուցված ծառայությունների ծավալը հունվար-դեկտեմբերին ավելացել է տ/տ 1.3%-ով: Մասնավորապես, բարձր աճ է արձանագրվել սոցիալական (26,6%), հյուրանոցային և ռեստորանային (9,2%), առողջապահության (7,4%), կրթության (5,7%), կապի (2,8%) և ֆինանսական ծառայությունների (0,5%) ոլորտներում:

**Իրական ՀՆԱ-ի աճի տեմպը
և տնտեսության ճյուղերի
նպաստումները**



3.5. ԱՇԽԱՏԱՎԵՐԻ ԾՈՒԿԱ⁵⁰

2009 թվականի չորրորդ եռամյակի ընթացքում աշխատանքի շուկայում առկա կոշտությունների պարագայում արձանագրվել է տնտեսության անվանական աշխատավարձերի որոշակի աճ պայմանավորված ինչպես բյուջետային ֆինանսավորում ունեցող, այնպես էլ մասնավոր հատվածի կազմակերպություններում աշխատավարձերի որոշակի աճով: Գործազրկության նակարդակը և տնտեսական անկման տեմպերին արձագանքել է որոշակի ժամանակային իզու-

⁵⁰ Աշխատանքի շուկայի չորրորդ եռամյակի տվյալները ՀՀ ԿԲ գնահատումներն են՝ հիմնված հոկտեմբեր, նոյեմբեր ամիսների փաստացի, և դեկտեմբեր ամսվա գնահատված ցուցանիշների վրա: Ենթաբաժնում ներկայացված աճի գնահատականները նախորդ տարվա նույն եռամյակի մկանը են, եթե այլ բան նշված չէ:

մով: Արդյունքում՝ աշխատանքի արտադրողականությունը նվազել է, որը աշխատավարձերի աճի պայմաններում հանգեցրել է միավոր աշխատուժի ծախսերի աճի: Այս զարգացումներով պայմանավորված՝ աշխատանքի շուկայի կողմից որոշակի գնաճային ճնշումներ են առաջացել:

Ըստ ՀՀ ԿԲ գնահատումների՝ 2009 թվականի չորրորդ եռամսյակում տնտեսության անվանական աշխատավարձերի միջին աճը կազմել է շուրջ 9%: Աշխատավարձերը զգալի բարձրացել են առողջապահության, կրթության և առևտության ոլորտներում, իսկ նվազել՝ շինարարության ոլորտում: Չորրորդ եռամսյակում, տարվա նախորդ եռամսյակների համեմատ, աշխատավարձերի աճի տեմպերը դանդաղել են:

2009 թվականի չորրորդ եռամսյակում շարունակվել է զբաղվածության ցուցանիշների՝ տարեսկզբից դրսնորվող վատրարացումը: Գործազրկության եռամսյակային միջին մակարդակն աճել է 0.7 տոկոսային կետով և կազմել 7%: Ընդ որում՝ պաշտոնապես գրանցված գործազրկության թվաքանակը 2009 թվականի ընթացքում աճել է 8.7%-ով, իսկ տնտեսությունում զբաղվածների թիվը նվազել է 1.4%-ով:

Եռամսյակի ընթացքում, տնտեսական ակտիվության նվազմամբ պայմանավորված, աշխատանքի արտադրողականությունը շուրջ 5 %-ով նվազել է:

Նշված զարգացումների հետևանքով տնտեսությունում արձանագրվել է միավոր աշխատուժի ծախսերի աճ, որը հանգեցրել է սպառողական շուկայում շուրջ 0.9 տոկոսային կետ գնաճային ճնշումների:

3.6. ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԳՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՊՐՈՊՈԼԵՐԻ ԳՆԵՐ

3.6.1. ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԳՆԵՐ

2009 թ. չորրորդ եռամսյակում համաշխարհային ապրանքային շուկաներում շարունակվել է գների աճը՝ հիմնականում գերազանցելով նախորդ տարվա մակարդակը: Ընդ որում՝ պահպանվել են ինչպես հումքային, այնպես էլ պարենային գրեթե բոլոր ապրանքների գների բարձրացման միտումները: Գների աճը հիմնականում պայմանավորվել է համաշխարհային տնտեսության վերականգնման միտումներով: Գրեթե բոլոր խոշոր երկրներում արդեն երրորդ եռամսյակում արձանագրվել էր եռ/եռ տնտեսական աճ, որը գերազանցել է սպասումները: Բացի այդ, ԱՄՆ դոլարի դիրքերի թուլացումը չորրորդ եռամսյակում նույնպես նապատել է հումքային ապրանքների դոլարային արտահայտությամբ գների աճին:

Ըստ Կենտրոնական բանկի գնահատումների՝ 2009 թվականի չորրորդ եռամսյակում՝ տարվա մեջ առաջին անգամ, ներմուծման դոլարային գները աճել են՝ տ/տ 5.4 տոկոսով (նախորդ եռամսյակում տ/տ նվազումը կազմել էր մոտ 8.3 տոկոս):

Ցուցանիշներ	IV եռ. 08	I եռ. 09	II եռ. 09	III եռ. 09	IV եռ. 09
Ներմուծում (ընդհանուր)	5.6	-12.7	-10.6	-8.3	5.4
Ներմուծում (ծառայություններ)	6.5	-7.4	-10.0	-9.1	3.1
Ներմուծում (ապրանքներ)	5.3	-14.4	-10.8	-8.0	6.1
Կապիտալ ապրանքներ ⁵¹	0.0	0.0	0.0	0.0	0.0
Սպառողական ապրանքներ	6.5	-7.4	-10.0	-9.1	3.1
Հումքային ապրանքներ	18.2	-21.1	-17.7	-15.1	-3.7
Աղաման ⁵¹	0.0	0.0	0.0	0.0	0.0
Նավթամթերք	-37.2	-53.5	-51.7	-40.9	34.2
Բնական գազ	0.0	0.0	40.0	40.0	40.0


Դոլարային գների տ/տ աճը հիմնականում պայմանավորվել է նավթամթերքների գների թոփքային և սպառողական ապրանքների գների՝ համեմատաբար մեղմ աճով, մինչդեռ հումքային ապրանքների գները շարունակել են նվազել:

⁵¹ Կապիտալ ապրանքների և աղամանի գների գնահատականների բացակայությունը պայմանավորված է դրանց փաստացի իշխան մեջ տատանողականությամբ, այդ իսկ պատճառով գների փոփոխությունը գնահատվում է զրոյակամ:

Հունքային ապրանքների գները տ/տ նվազել են 3.7 տոկոսով (նախորդ եռամսյակում տ/տ 15.1 տոկոս նվազում) պայմանավորված հացահատիկի և մետաղների գների նվազմամբ: Ընդհանուր գների վրա հունքային ապրանքների գներն ունեցել են -1.0 տոկոսային կետ ազդեցություն:

Չորրորդ եռամսյակում, տնտեսության վերականգնման լավատեսական սպասումների պարագայում, գրանցվել է նավթամթերքի դրամային գների աճ, որը տարեկան կտրվածքով գերազանցել է նախորդ տարվա նույն եռամսյակի ցուցանիշը: Այսպես՝ նավթամթերքի գները չորրորդ եռամսյակում աճել են տ/տ 34.2 տոկոսով (նախորդ եռամսյակում՝ 40.9 տոկոս նվազում): Ընդհանուր ներնուժնան գների վրա ազդելով 2.2 տոկոսային կետով:

**Ներմուծված ապրանքների
գները չորրորդ եռամսյակում
բարձրացվել են**



Սպառողական ապրանքների գների աճը 2009թ. չորրորդ եռամսյակում կազմել է տ/տ 3.1 տոկոս, որը ընդհանուր ներմուծման գների վրա ունեցել է 0.6 տոկոսային կետ ազդեցություն: Ընդհանուր առնամբ, գործընկեր երկրների փոխարժեքների փոքր արժեզրկումը (1.8 տոկոսային կետ) չորրորդ եռամսյակում չեզոքացրել է գնաճային ազդեցությունը (4.1 տոկոսային կետ): Եվոյի արժեքում և եվրոպական երկրներում գրանցված գնաճի հետևանքով Եվրոգոտու ազդեցությունը ընդհանուր ներմուծման գների վրա կազմել է 0.6 տոկոսային կետ:

Միջազգային գների տ/տ 5.4% աճի և ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին անվանական փոխարժեքի տ/տ 25.5% արժեզրկման պայմաններում՝ սպառողական զամբյուլում ներառված ներմուծված ապրանքների դրամային գները չորրորդ եռամսյակում տ/տ աճել են 3.4 տոկոսով:

3.6.2. Արտադրողների գները⁵²

2009 թվականի հունվար-դեկտեմբերին ՀՆԱ դեֆյատորը կազմել է տ/տ 101,5%՝ զիջելով նախորդ տարվա համապատասխան ցուցանիշին 6.9 տոկոսային կետով: Ընդ որում՝ արտադրողների գների աճը եռամսյակի ընթացքում պայմանավորվել է արդյունաբերության և բեռնափոխադրումների ոլորտում արձանագրված գների աճով:

Գյուղատնտեսության ճյուղում տարվա չորրորդ եռամսյակում գները նվազել են տ/տ 11.9%-ով՝ իհմնականում պայմանավորված բռնտանային մշակաբույսերի, տանձի, խնձորի և խաղողի հարուստ բերքի ստացման պարագայում դրանց մթերման գների նվազմամբ: Մինչեւ, զգալիորեն բարձրացել են մսամբերքի (մասնավորապես՝ տավարի և ոչխարի) մթերման գները:

Շինարարությունում գների նախորդ տարվա նույն եռամսյակում արձանագրված բարձր մակարդակը պահպանվել է, որին նաև նպաստել է շինարարության ծավալների ամկան տեմպերի նվազումը:


Արդյունաբերության ճյուղում չորրորդ եռամսյակում արձանագրվել է արտադրողների գների տ/տ 27.3% աճ, որը պայմանավորված է հունվար-դեկտեմբերին էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման ենթաճյուղի՝

⁵² Տնտեսության ճյուղերի գների ինդեքսները թողարկման գների ինդեքսներն են:

տ/տ 33.7% և մշակող արդյունաբերության ենթաճյուղի՝ տ/տ 2.7% աճով։ Միևնույն ժամանակ, հաճքագործական արդյունաբերությունում արդյունաբերողների արտադրանքի գները տ/տ նվազել են 16.8%-ով՝ պայմանավորված այս տարի, նախորդ տարվա համեմատ, համաշխարհային շուկաներում գունավոր մետաղների միջին տարեկան գների ցածր մակարդակի ձևավորմամբ։

Բեռնափոխադրումների սակագները տարվա չորրորդ եռամյակում բարձրացել են տ/տ 11.9%-ով։ Ընդ որում, հիւնվար-դեկտեմբերին բեռնափոխադրումների սակագների աճ է արձանագրվել երկարգծով՝ բեռնափոխադրումների սակագների տ/տ 8.8% (հիւնվարից երկարգծի ծառայությունների համար սահմանվել են նոր սակագներ), օդային տրամսպորտով՝ բեռնափոխադրումների սակագների տ/տ 17.7% և խողովակաշարային տրամսպորտի (2009 թվականի ապրիլի 1-ից գազի սակագները բարձրացել են՝ 154 ԱՄՆ դոլար՝ նախկին 110 ԱՄՆ դոլարի փոխարեն) սակագների տ/տ 14.6% աճի հաշվին։

2009 թ. չորրորդ եռամյակում գների աճ է գրանցվել բեռնափոխադրումների և արդյունաբերության ոլորտներում, իսկ նվազում՝ գյուղատնտեսության ճյուղում



3.7. Գնաճի սպասումներ

ՀՀ ԿԲ-ն ամփոփել է գնաճի սպասումների վերաբերյալ ֆինանսական հատվածի կազմակերպությունների, տնային տնտեսությունների և իրական հատվածի ոչ ֆինանսական կազմակերպությունների շրջանում 2009թ. չորրորդ եռամյակի համար իրականացված հարցման արդյունքները։

Բանկերում և վարկային կազմակերպություններում իրականացված հարցումների համաձայն՝ ֆինանսական համակարգում հետագա 12-ամսյա ժամանակահատվածի համար գնաճային սպասումները նախորդ եռամյակի հարցման արդյունքների համեմատ էապես չեն փոփոխվել։ Թե՛ բանկերի և թե՛ վարկային կազմակերպությունների ընտրությունը հիմնականում հավասարաչափ է բաշխվել 12-ամսյա գնաճի երկու՝ 2.5 - 5.5% և 5.5 - 8.5% միջակայթերի միջև։ Այսպիսով, գնաճի վերաբերյալ ֆինանսական համակարգի սպասումները հիմնականում խարսխված են, քանի որ նոտ են ԿԲ կողմից ընտրված նպատակային միջակայթին, սակայն արտահայտում են նաև բարձր գնաճային ռիսկեր։

Տնային տնտեսությունների ու իրական հատվածի ոչ ֆինանսական կազմակերպությունների՝ պարենային ապրանքների ապագա գների վերաբերյալ սպասումները աճի ուղղությամբ են։ Նախորդ եռամյակի 35.0%-ի փոխարեն գների աճ է ակնկալում 59.4%-ը, իսկ կայուն մակարդակ՝ 36.9%-ը՝ նախորդ եռամյակի 59.7%-ի դիմաց։

Ըստ հարցման արդյունքների՝ շուկայական տոկոսադրույթների վերաբերյալ առևտորային բանկերի և վարկային կազմակերպությունների՝ մեկ տարվա հորիզոնով կանխատեսումները հիմնականում անփոփոխ մակարդակի պահպանած և մասամբ էլ՝ փոքր-ինչ նվազման ուղղությամբ են։ Ընդ որում հիմնականում կայուն են ներգրավված և տեղաբաշխված դրամային միջոցների հետ կապված սպասումները, իսկ արտարժության միջոցների տոկոսադրույթների գծով մի շարք բանկեր և վարկային կազմակերպություններ ակնկալում են նվազում։

